



Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:

Share — copy and redistribute the material in any medium or format

Adapt — remix, transform, and build upon the material

hkn

✓1544

1999

ՆՈՐ ՀՐԱՇՔ

Ի

ԳՈՒՄ ԳՍԲՈՒ

ԵՒ

ՆՈՐ ԳԻԻՏ

ԱՆԵՐԵՒՈՅԹ ԸՂԼՍՒՆՈՒ

1649



Կ. ՊՕԼԻՍ

ՏՅԱԳՐՈՒԹԻՒՆ Ե. Գ. ԲՕՋԼԵԱՆՏ

(1875)

Ընթերցողք տեարակիս խորագիրը տեսնելով անշուշտ կամ երազ պիտի կարծեն և կամ լրիկ վիպասանութիւն մը . սակայն ո՛չ այն ոչ այո է , այլ զուտ իրականութիւն պիտի պատմեմ , իրական դէպք մը , որ փորձերով ստուգուած և հաստատուած է : Մարդկային ազդը իսկզբանէ ՚ի վեր բնութեան դադտնեաց խորը թափանձելու ետեւէ եղած և շատ օգուտներ յառաջ բերած է , ամէն ժողովրդեան մինչև հիմա ունեցած յառաջադիմութիւնները աշխատութեամբ , հետաքրքրութեամբ , քննութեամբ և գիտաւորապէս փորձերով եղած են , այն բանը որ մարդս շատ անգամ ոչինչ կը համարի իր տգիտութեանը համար , բայց կը կործանունէ . նոյն իսկ մեր ապրած երկրին և բնութեան մէջ այնպիսի դադտնիքներ կան որ՝ մարդիկ հազիւ թէ անոնց մէկ հազարերորդ մասին տեղեկացեր են կամ ո՛չ : Այս հրատարակութեամբ ըստ ընթերցողաց միայն գաղափար տալ չէ իմ նպատակս . այլ մանաւանդ փորձերու փորձիկ աղբիւր ո՞ր բանալ , և անով որիչ գիտեր հետընդ միջ հայիմ այլ ելք :

ՀԲ. 1549

41544. 60

Յայտնի է որ Եւրոպայի ամեն լուսաւորեալ
ազգաց մէջ երեւելի հանճարեղ քիմիադէտ-
ճեր (-ւէֆօր) կան . անոնք իրենց անձանձիր աշ-
խատութեամբը շատ գաղտնիքներ երևան հա-
նածեն, և անոնց աշխատութեան արդիւնքը բու-
լոր աշխարհս կը վայելէ այսօր, թէպէտև հա-
զուազիւտ եղած են այնպիսի անձինք՝ որոնք զա-
նազան հնարքներով և գիւտերով լոյս և կեանք
տուէր են մարդկային ազգի, իմ պատմելիքս
թէպէտև նոր՝ բայց հին ժամանակուան ուս-
մանց և արհեստից արդիւնքն է, միայն կատա-
րելագործելու խիստ պէտք ունի, այդ պէտքը
ես չըկրցայ լրացնել ժամանակիս ձախորդու-
թեան պատճառաւ, և թէ չուզեցի որ Եւրոպա-
ցի արհեստաւորաց յանձնեմ՝ այդ գործը, որ-
պէս զի չըլլայ թէ վերջը իբրև իրենց հնարած
մէկ գիւտը մեզի ծախելու երևն. թէև պատ-
մելիքս իմ գիւտս և հնարքս ալ չէ, այլ աղ-
քատիկ՝ աղջկանմը պատահած որանչելի դէպ-
քին՝ և անով տեղի ունեցած փորձերուն մէկ
պատկերը և կամ մէկ յատակադիժն է, որմէ
շատ լոյս կրնան ստանալ ամէն ողջամիտ ան-
հասներ, մարդիկ բնութեան ամէն գաղտնեաց
տեղեակ չըլլալով՝ շատ բան ոչինչ ընդունած և
անօգուտ համարած են ըսինք, սակայն բնու-

թիւնը իր որանչելիքը ցոյց տալու համար, շատ
անդամ մեր առջևը դիպուածի պէս գլտորած՝
և հազիւ թէ մէկ փոքր հիւլէի մը չափ օգուտ
տալով խոյս տուած է. այս ալ միմիայն մար-
դոց տգիտութիւնը պատճառ եղած է, որ բնու-
թեան մեծամեծ օգուտները քաղելու տրամա-
դրութիւն չեն ունեցեր, իրաւ է որ միայն մար-
դոցը չէ յանցանքը, բնութիւնը ինքն ալ զըր-
կանք ըրած է:

Ռոզհետև Յուանքլինի, Հիփոկրատի, Կութէմ-
պերկի և այլններու տուածները խիստ հազուա-
դիւա է, և մարդկային ազգի շատութեանը նա-
յելով՝ ըսել կըլլայ միլիօնաւոր աստղերու մէջ
մէկ քանի գիտաւորներ, ՚ի հարկէ մարդիկ բնու-
թիւնը պիտի մեղադրեն և բնութիւնն ալ զմար-
դիկ, ապագայ ժամանակը այս թերութիւնն
ըը կարելի է յարդարէ:

Պատմենք հիմա Գումգալիուի մէջ պատա-
հած մէկ հրաշքը, որուն մէջ Ստուծոյ և բնու-
թեան մէկ գաղտնիքը կը պարունակէ:

ՆՈՐ ՀՐԱՇԲ Ի ԳՈՒՄ ԳՍՓՈՒ

Ա.

Գումգափուի Հարաւային կողմը երկայարկ
և հին տան մը մէջ որբեւարի կնիկ մը կը բնա-
կէր և մէկ հատիկ աղջիկ զաւակ ունէր տանն
և ութը տարեկան, աղջկան հայրը մեռած էր
տասը տարի առաջ, մարդը մեռնելու ժամա-
նակ հարիւր լիբայի չափ դումար մը կ' թողու-
իր աղջկան իբրև օժիտ, և մէկ հին տուն մը,
Հօճա-փաշայի հրդեհէն մնացած, մարդը մե-
ռած ատենը՝ աղջիկը տասը տարեկան կըլլար
և տան մէջ կնկան մը քով կերթեկէր, կար-
դալ և ասեղներգործութիւն սովորելու համար:
Օրիորդը երկու կերպ դեղեցկութիւն ու-
նէր, թէ՛ բնաւորութեան և թէ՛ դէմքին կող-
մանէ. բնաւորութիւնը խիստ պարկեշտ, և հա-
մեստ. հողեսէր և դործօնեայ, դէմքը սպի-

տակ, աչքերը և յօնքերը սև, ճակատը տափակ, քիթն ու բերանը փոքր, մազերը երկայն և խարտեայ, հասակը միջակ, ինքը ընդունակ, ճարպիկ և սրամիտ :

Մայրը հարիւր լիրա դումարը հաւատարիմ վաճառականի մը տուած էր և տոկոսը առնելով կապրէին, հօրը մեռնելէն մինչև հինգ տարի անցած էր՝ երբ վաճառականը անանկանալով օրիորդին օժիտը սպառեցաւ և անբըլու միջոցնին վերջացաւ, թշուառ կիներ այս կողմ ինկաւ այն կողմն ինկաւ բայց չի յաջողեցաւ, և դնաց վաճառականին ոտքը ձեռքը ինկաւ ու լացաւ, և վերջապէս փոխանակ հարիւր լիրայի՝ երեսուն և հինգ լիրա ստանալով իր տունը դարձաւ, վաճառականին անանկացած օրէն մինչև 35 լիրան ստանալը տարի ու կէս ժամանակ անցեր էր, այնչափ միջոցին մէջ երկու հազար հինգ հարիւր զուրուշ պարտքը րած էին հացագործին, նպարավաճառին և այլոց, մայրը կը մաածեր թէ ինչ պիտի ըլլայ խեղճ օրիորդին ապագան Սուտու մը օրիորդը երբ իւր սովորութեանը համեմատ կաղօթէր իր սենեակին մէջ և մայրն ալ դեռ կը քնանար, յանկարծ փողոցին դուռը զարնուելով երկու հոգիի ձայներ լսուեցան,

օրիորդը սանդուխէն վար վազեց և դուռը բացաւ, և տեսաւ որ նպարավաճառն ու հացագործն էին, առանց մօրը ձայն տալու վեր կե նէ արկղը կը բանայ և 15 լիրա դրպանը դնելով կուգայ նպարավաճառին և հացագործին հաշիւները մէկ մէկ քիչ գեղջելով կը վերջացնէ, նպարավաճառը դուրս կեցնէ, հացագործը օրիորդին ցած ձայնով մը կըսէ, — հիմա կուան տուած ամեն ստակներդ քեզի ետ կուտամ, և բոլոր կեանքիդ մէջ ձրի հաց կը կերցունեմ, թէ որ ինծի էրիկ ընդունիս — : Օրիորդը կարմրելով և ամենեին պատասխան չիտալով սանդուխէն վեր կեցնէ և իր սենեակը կը մտնէ, քիչմը ետքը մայրը յանկողինէն կեցնէ և օրիորդէն կիմանայ որ նպարավաճառին և հացագործին պարտքերը մաքրուէր է թէպէտև առաջին անգամ կը զայրանայ 15 լիրա մէկէն տրուած ըլլալուն համար, բայց օրիորդին խելացի խօսքերէն համոզուելով ուրախ կըլլայ երկու պարտապահանջներէն ազատուելուն պատճառաւ, հացագործին ըսած վերջին խօսքերը՝ օրիորդը չի յայտներ իր մօրը :

Կանցնին օրեր ու ամիսներ, ստակները կը հասնին, պարտքերը կը նորոգուին, տանը վարի յարկի որմերը կը վիլին, ասոնք մայր ու աղ-

Նիկ դիշեր ու ցորեկ ասեղ զարնելով աչքեր-
 նին կը շլանայ, աղքատութիւնն ու թշուա-
 ութիւնը օր աւուր կը ծանրանայ, մարդէ մը
 յոյս և օգնութիւն չիկայ, իրենց աղգական-
 ներն ալ իրենց պէս աղքատ ընտանիքներ, և
 կնկան այրը գաւառացի ըլլալով այս տեղ աղ-
 գականներ ալ չէր կրնար ունենալ, կնիկը իր
 տաներէցին կերթայ օգնութիւն կը խնդրէ և
 հաղիւ տասը դահեկան կառնէ ու կը դառնայ
 կուղայ տուն. և կը տեսնէ որ դեղեցիկ օրիոր-
 դին աչքերէն կաթիլ կաթիլ արցունք կը թա-
 փէին, մայրն ալ կըսկսի լալ և իր ծննդեան
 օրը անիծել, աղջիկը մօրը յուսահատութիւնը
 տեսնելով կը ցաւի, և կը յորդորէ մօրը որ
 Աստուծոյ արդարութեան դէմ չի մեղանչէ,
 վասն զի աւելի թշուառութեան ենթակայ կըլ-
 լանք կըսէր, և միշտ իր մօրը քաջալերութիւն
 կուտար որ յոյսը Աստուծոյ վրայ դնէ, և շատ
 օրեր չոր ու ցամաք հաց ուտելով կապրէին,

1874 թուականին Յունկար ամսուն մէջն էր
 երբ երկինքէն ձիւնը սաստիկ կըտեղար և երբ
 ածուխն հոխան երեք դահեկանի բարձրացաւ,
 խեղճ կիներ ու օրիորդը բուքէն ու ցրտեն նե-
 զացած՝ վերմակներուն ներքև կը պահպան-
 ուէին:

Ասոնք գաւառացի աղքատ բարեկամ
 մը ունէին Յակոբ անունով և բնիկն էր պան-
 դոկի մը մէջ կը բնակեր, մէկ օր այն ցուրտ
 ժամանակները այս մարդը երկու օխայի չափ
 ածուխ կը բերէ և հինգ ալ դահեկան կը հա-
 նէ կուտայ, և քիչ մը ալ մխիթարական խօս-
 քեր ընելով քանի մը օրէն դալու խօսք կուտայ
 և դուրս կընէ, այն երկու օխա ածուխը եր-
 կու շաբաթի չափ կը զործածեն բաւականա-
 սիրութեամբ, որովհետև ասոնց տունը տաք կե-
 րակուր չէիուելով՝ միայն պանիր և ձիթապ-
 տուղ ուտելով կանցունէին կեանքերնին, Փետ-
 րուար ամսուն երբ ձիւնը ու ցուրտը ալ աւե-
 լի սաստկացաւ, իրենց բարեկամ ծերունի Յա-
 կոբը դարձեալ եկաւ, բայց այս անգամ հինգ
 օխայի չափ ածուխ և կէս օխա ձիթապտուղ
 բերաւ իր հետ որովհետև մեծ պահքի շաբթու-
 էր, և մէկ մեծ գիրք մը մագաղաթի վրայ
 դրուած և ՅՅՅ երեսներէ բաղկացեալ, օրիոր-
 դին կուտայ որ ղգուշութեամբ պահէ, ծերու-
 նին այս անգամ տասն օր հիւր կըլլայ այն տեղ
 և փոքր ՚ի շատէ ծախք կընէ, սյդ մարդը
 դիշերները քուն չընանալով միշտ կը կարդար
 ներքնայարկի սենեակին մէջ՝ այն ժամանակ,
 երբ ասոնք մայր ու աղջիկ կը պահուէին:

Առտու մը օրիորդը հարցուց ծերուկին թէ՛ դիչերները կարծեմ՝ չես քնանար և միշտ կը կարդաս, առանց քնանալու հիւանդ չե՞ս ըլլար:

Ծերունին պատասխանեց թէ՛ — Ինչ որ Աստուծոյ համար է՝ այն բանէն վտանգ չի դար մարդուս:

Երբ մետասաներորդ օրը եղաւ՝ ծերունին դիրքը թողուց օրիորդին և ելաւ դնաց, ըսելով թէ՛ — ասկէց վերջը Աստուած իր ողորմութիւնովը ձեր ամեն ցաւերը պիտի վերցնէ, և քիչ օրէն ամեն նեղութիւններէն պիտի ազատիք:

Կանցնի միջոցը ութ օր՝ տաներէցը տուն կուգայ և երեք լիրա կը բերէ կուտայ մօրը զատկուան պէտքերնիդ հոգայէք — ըսելով՝ զատկին ալ քսան օր մնացեր էր. քանի մը օրէն վերջը դերձակ արհեստաւորներէն մէկը կուգայ, և որբեւայրի կնկան անունը և հանգուցեալ էրկան մականունը տալով երկու լիրա կուտայ և կերթայ, հետեւեալ օրը իրենց հացագործը կուգայ որ 350 դահեկան պարաք ունէին. Ձերբէ կը պահանջէ և առանց ստակ մը ընդունելու կը որբէ ու կրտէ, — Աղային մէկը ինձի պատուիրեց որ ձեր ամեն օրուան հացը տամ, դուք միայն աղօթող եղիք այն Աղային համար եւլն եւլն —, մայրն ու աղջիկը ուրա-

խութիւններնուն ինչպէս աղօթեալն և ինչ ըսելին չեն դիտնար, եկաւ աւագ հինդչարթի օրը մայրը ու օրիորդը պատրաստուեցան ցերեկուան պատարագի երթալու, մինչեւ վողոցին դռնէն դուրս պիտի ելնէին, Կեսարայի մարդ մը կը հարցընէր տուներուն թէ, — այն ինչ որբեւայրի կնկան տունը ո՞րն է —, կինը այս է ըսելով մարդը ներս հրաւիրեց, որուն ձեռքը մէկ աման կարագ, չորս մեծ կտոր ապուխտ եւ սեւ թուղթի մէջ վաթթուած տառն եւ հինգ ճերմակ մէճիտիէ կար, կնկան ձեռքը տալով դուրս ելաւ, ասոնք իւզը ապուխտը խոհանոցը պահարանին մէջ տեղադրելով եւ ստակները վերի արկղին մէջ դնելով՝ ելան եկեղեցի դացին փառք եւ օրհնութիւն տալու Աստուծոյ: Երբ պատարագը աւարտելով տուն կը դառնային, գոհարեղեններով եւ թաւչեայ չըջաղգեստով դարդարուած տիկին մը պատահեցաւ, որուն սպասաւորը մախաղ ՚ի ձեռին ետեւէն կերթար, հարուստ տիկինը այրի կնկան ժպիտ մը ցոյց տալով բարեւեց եւ օրիորդին դառնալով որպիսութիւնը հարցուց, յետոյ իր տունը ճաշի հրամցուց, օրիորդը դժկամակեցաւ երթալու, որովհետեւ հագած չըջաղգեստը հին էր, տիկինը շատ ստի-

սրեց եւ վերջապէս իր տունը տարաւ ճաշի, ա-
ստնք կը զարմանային թէ— ո՞վ է արդեօք այս
Տիկինը եւ ո՞ւրկէ կճանչնայ մեզի — բայց չէ-
ին համարձակէր բան մը խօսելու, բազմեցան
սեղանին բոլորտիքը, բայց աստնք ուտելու կը
քաջուէին, մանաւանդ որ ամիսներով տաք կե-
րակուր չէր մտած բերաննին: Աղքատական տի-
կինը եւ անոր բարեսիրտ այրը չափէն աւելի
պատիւ ըրին ասոնց, ճաշը վերջացաւ սուրճեր-
նին խմելէն վերջը Տիկինը հարց ու փորձ
ըրաւ թէ — ո՞րչափ ժամանակէ ամուսինը մեռ-
նիլը, ինչ վիճակի մէջ ըլլալը, ո՞րչափ պարտք
ունենալը, հանգուցեալ այրը ո՞ր դաւառէն ըլ-
լալը, օրիորդը ամուսնացնելու միտք ունի՞ թէ
ո՛չ —, աստնք բոլորը հարցնելէն վերջը, ըսաւ,
եթէ քու օրիորդիդ համար բարի երիտա-
սարդ մը պատահի՝ իմ կողմանէս հարիւր +ծու-
լէր միշտ պատրաստ է՝ ազլկանդ սընտուկը
մնալու պայմանաւ, եւ պէտք եղած ճերմակե-
ղենները եւ զգեստները ես ինքս պիտի հո-
դամ, հիմա դուն պիտի զարմանաս թէ ես
ձեզ ինչէ՞ն կը ճանչնամ, ասիկայ աստուծոյ
մէկ դաղտնիքն է, հերիք է որ դուն մեզի հետ
ծանօթացար, ասկէց վերջն ալ եղածին չափ
մեր օգուտը կը հարմի ձեզի եւնի եւնի — : Յայտ-

նի է որ այս խօսքերը օրիորդէն դաղտնի էր,
տիկինը միայն մօրը հետ կը խօսակցեր, վերջը
օրիորդը կանչեց առանձին սենեակ մը եւ սըն-
տուկ մը բանալով երկու ձեռք զգեստ շնոր-
հեց եւ մօրն ալ երկու նափօլէտնի ոսկիներ
տալով ճանապարհ դրաւ, մայրը եւ օրիորդը
իրենց տունը դնացին եւ սկսան մէկզմէկու
հետ խօսիլ իրենց պատահածներուն վրայ, եւ
այնչափ ուրախ էին որ մինչեւ անդամ խեղքեր-
նին կորսնցնելու պէս եղան, որովհետեւ տա-
սը վայրկենիչափ խնդացին ու լացին, իրիկուն
եղաւ ելան եկեղեցի դնացին եւ ամբողջ գիշե-
րը այն տեղ անցուցին, հետեւեալ ուրբաթ ա-
ռաւօտուն դարձան իտուն, Աւագ շաբաթ օրը
մայր եկեղեցւոյ թաղական խորհրդարանէն կան-
չուելով մայրը ելաւ դնաց, եւ անոնցմէ ալ
ընդունեց իրենց զատկական պարգեւը, Աւագ
շաբաթ իրիկուն ծերունին տուն եկաւ քանի
մը հատ ձու եւ երկու հաց իր հետ բերելով
ասոնց վիճակը կը հարցնէր, եւ ամեն պատա-
հածները լսելով՝ զարմանք կը յայտնէր անոնց,
յետոյ նստեցան կերակուր ուտելու, այն գիշե-
րը ուրախութեամբ անցուցին, անանկ որ իրենց
կեանքերուն մէջ այդպէս երջանիկ գիշեր մը
չէին վայելած:

Գիշերը եկեղեցի երթալու վրայ խօսք բացաւ ծերուկը, եւ անոնց հաւանութիւնը աւնեւլէն վերջը, ժամակոչին ձոյն տուէք, ըսելով ինքը գնաց պաւակեցաւ, ասոնք մինչեւ ժամակոչին դալուտը նստեցան, յետոյ ծերուկին ձայն տալով ելան եկեղեցի գնացին, ծերուկը մէկ ժամու չափ եկեղեցին մնալէն վերջը՝ առանձին դարձաւ տուն եկաւ եւ օրիորդին պահել տուած գիրքը պահարանէն հանելով կարդալու սկըսաւ մինչեւ չորս ու կէս ժամ, նստած սենեակին դռնէն յանկարծ բաձրահասակ եւ սպիտակամորու Տերմէ մը ներս մտաւ անձայն կայնեցաւ այն տեղ մինչեւ քսան եւ հինգ վայրկեան, այնուհետեւ բարեւեց զծերուկ, ծերուկը բարեւը անելով կարդալը շարունակեց, Տերմէ տաւր վայրկեան վերջը սա խօսքերը արտասանեց — լուսեցան քու խընդերքդ, միայն պահանջէ — Ծերուկը ծնկան վրայ գալով հետեւեալ աղօթքը ըրաւ, Սալաւատը ապպանիաթ, ապանա ըլլազի ֆի ըլլամալաթ լայիթ դատտաս իամաք, լաթադօն մըշիթաք, դամա ֆիլըամա վա քէզալէք ալա ըլարտ, աթինա խուզըլինա գալաֆինա ըլեօմ, վա աղֆօր լինա դունուպինա քամաեանա դամանու հօն նուսվօրիլէյնա վալաթըթիլընա մինըլարիը վալըուաթ.

1649

վաթապաթ, ըլլապատ, ըլլապիտին ամին։
 Այս ըսելով ոտքի վրայ ելաւ և Տերմէ մօտենալով ձեռքէն անադի կտոր մը ընդունեց եւ անկիւնի, յետոյ տէրվիշը աներեւոյթ ըլլալով՝ ծերուկը գիրքն ու անագը պահելով ելաւ եկեղեցի գնաց, որ արդէն աւարտելու մօտէր, եկեղեցիին դրան առջեւնեքը երեքալով կնկան ու օրիորդին կըսպասէր, քիչ մը վերջը անոնք դուրս ելնելով միատեղ տուն դարձան, բայց գիշերուան դործողութիւններէն տեղեկութիւն չունէին, և նստեցան ճաշ ընելու, ծերունին շատ խօսելը չէր սիրէր, օրիորդը մօրը դարձաւ ըսաւ թէ՞ — մայրիկ, այսօր այն աղնուական տիկնոջ տունը երթալ և շնորհատրել կը վայելէ՞ արդեօք, — ո՛չ, պատասխանեց մայրը. այս միջոցին դուռը զարնուելով Աղնուականին սպասաւորը եկաւ և ախտէի մէջ դրուած երկու տեսակ խմորեղէն բերաւ և ուրիշ ամանի մը մէջ պարպել տալով՝ ախտէն առաւ ու գնաց, ասոնք ճաշերնին վերջացունելու վրայ էին, օրիորդը խըմորեղենէն մէկ մասը պնակի մէջ դնելով սեղանը դրաւ, մայրը ծերուկին հրամայուց որ ուտէ, բայց այն ախորժակ չունիմ ըսելով սեղանէն ելաւ և վեր գնաց, մայրը խմորեղենէն

մէկ կտոր առնելով երբ որ կէսէն պիտի կրտ-
րեր, չորս հատ քառթ լիրաներ թափեցան
մէջէն, միւս խմորեղէններն ալ աչքէ անցու-
ցին և տեսան որ բողբոլին մէջն ալ շարուած
քառթ լիրաներ կան, ընդ ամենը քան հատ
համրեցին, անանկ որ խմորեղէններուն միջին
ծալքին մէջ կարգաւ շարուած էին, օրիորդը
ուրախութեամբ համրեց ու առաւ և սպիտակ ջու-
րերով լուաց և վեր վազեց ծերուկին ցոյց տու-
աւ, ծերուկը պատուիրեց որ մարդու խորհուրդ-
չիտան, և օրիորդէն վերմակ մը ուզելով պառ-
կեցաւ ու քնացաւ, մայրը և օրիորդը կը խօ-
սէին, կը խորհէին և զանազան խորհրդածու-
թիւններ կընէին, սակայն մայրը այս ամենը
ծերուկին չտրհն ըլլալը հասկացեր էր, որովհե-
տեւ այրը կենդանի եղած ժամանակը այս ծե-
րունին շատ անգամ կուգոր կերթար և քանի
մը սքանչելիքներ ցոյց տուած էր, բայց երբ
որ կնիկան այրը մեռաւ՝ ծերունին իր երկիրը
դնաց և երկու տարի կենալէն վերջը դարձեալ
Պօլիս վերագարձաւ, այդ մարդուն արհեստը
ուսկանագործ էր, բայց դիշերները եզրպտա-
կան արհեստներով կըզբաղէր:

Գումգափուի թաղի մէջ դիշեր մը Մ. Է.
ի տունը տօնախմբութեան հանդէս կար, ծե-

րունին ըստիպեցին որ հանդէսին մէջ սքանչե-
լիք մը ցուցնէ, շատ ազաշերտէն վերջը՝ ծերու-
նին դրպանէն փոքրօք տուփ մը հանեց որուն
մէջ շիկագոյն փոշի մը կար, խանիկ (թասլա)
մը առաւ ձեռքը և անոր մէջ քանի մը մոխրա-
խառն կրակներ դնել տալով՝ շիկագոյն փո-
շին վրան ցանեց, երկու վայրկեանին մէջ հան-
դիսականները անգլուխ կը տեսնուէին, իբրեւ
թէ գլուխնին մարմիններէն բաժնուած, այս
գործողութիւնը քառորդ շափ տեսէէն վեր-
ջը ուրիշ ցոյց մը ըրաւ, դրպանէն սպիտակ և
փոքրիկ մորթ մը հանեց, կարծեմ գորտի մաշթ
էր, այդ մորթին ծայրէն ունելիով բռնեց և
կրակին վրայ տաքցուց, այնուհետեւ հանդի-
սականներէն երիտասարդ մը կանչելով դիխար-
կին մէջ դնել տուաւ և գլուխը ծածկեց, սհ,
ինչ կը տեսնես, հանդիսականաց մեծ սրահին
դէպ ՚ի ձեղունը բարձրանալով՝ երիտասարդը
կախուած մնաց մինչեւ հինգ վայրկեան, հան-
դիսականներէն մէկը հարցուց ծերուկին թէ՞
— այս արհեստը ո՞ր կէ սովրեցար —, ծերուկը
պատասխանեց թէ՞ — արդի երիտասարդու-
թեան արհամարած մէկ դիւրքէն սովրեցայ — :

— Հացուց մէկ ուրիշը,
— Ո՞րն է այդ դիւրքը որ երիտասարդ ու-

Թիւնը կարհամահէ.

Մեր—, Վեց Ազգրիան է

Այս խօսքին վրայ երտասարդներէն ոմանք սկսան ծիծաղիլ ու վիճաբանութիւն մը բացուեցաւ, որն որ երկու ժամ տեւեց, ծերը ամենեւին պատասխան չիտալով երթալ ուզեց ալ նէ, թող չի տուին և վիճաբանութիւնը դադրեցուցին. ծերունին սրամտութեամբ մը շատ ծաղրող երիտասարդներէն մէկուն ըսաւ — պարոն, հասա՞ր պարան մը գտիր և իմ քովըս եկու՞ր —, տանը սպասաւորները շուտով պարանը ճարեցին և երիտասարդին բերին, ծերունին հրամայեց երիտասարդին որ այն պարանով երկու ձեռքերը ու ոտքերը կապեն, ու ժեղ երիտասարդը ծերուկին ձեռքերն ու ոտքերը կապեց իբրև հակ, այնուհետեւ երիտասարդին ըսաւ որ ծերուկին քսակէն սիկառ մը շինէ և վառելով ծերուկին բերանը դնէ, երբոր ծերունին սիկառը ըսկսեց քաշիլ՝ երիտասարդը միւս կողմանէ պարանով կապուիլ ըսկսաւ, պարանը զարմանալի արագութեամբ երիտասարդին վրայ կը դառնար, և այնպէս կապեց ու կաշկանդեց որ երիտասարդը կոճղ դառնաւ ու մնաց, ծերը այն ժամուն աներեւոյթ եղաւ, մարդ չըզիտեր թէ ինչպէս դուրս ելաւ:

Եւ ո՞ր գնաց, Հանդէսին տերը Մ. Լ. աղան շատ իրար անցաւ, պարանը քակելու համար մէկը դանակ կը բերէ, միւսը մեծ մկրատ և միւսը խարտոց, երեք հոգի աշխատեցան որ երիտասարդին պարանը քակեն, բայց չը կրցան յանդիլ, կարծես թէ երկաթ է կտրեր պարանն ու կապերը, հանդիսականները ոմանք տխրեցան, ոմանք զայրացան և ոմանք ալ ծիծաղելով կը մարէին, երիտասարդը կովերու պէս կ'պօռար և կը բարկանար, այս միջոցին սրահին ձեղունէն յանկարծ երկու ձեռքեր տեսնուեցան, ուր հանդիսականք ապշած կը դիտէին, այդ երկու ձեռքերը կաշկանդուած երիտասարդը մագնիսական զօրութեամբ վեր քաշեցին, երիտասարդին հետ ժողովուրդն ալ ազակել սկսաւ, այն տեսնուած երկու ձեռքերը երիտասարդին կապերը քակեցին և ձեղունէն վար նետեցին որ կէս ժամէն աւելի թմրած մնաց այնպէս, նորէն վիճաբանութիւն բացուեցաւ հանդիսականաց մէջ, ամէն գլխէն մէկ մէկ ձայն կելներ, երիտասարդներեն մէկ քանիները խնդիրը երգի փոխեցին որպէս զի վիճաբանութիւնը վերջանայ, այնպէս ալ եւ աւ, երբ գործը պարելու ելաւ, չորս երիտասարդ մէկ կողմ և չորսը միւս կողմ, այն ժա-

մանակ ծերը գարձեալ իր տեղը նստած տեսնուեցաւ, պարող երիտասարդներէն մէկը իր ընկերին ըսաւ գաղղիարէն թէ՛ — արդարեւ եգիպտական արհեստին տեղեակ ըլլալու է այս մարդը—, ընկերը պատասխանեց թէ՛ — անշուշտ արհեստ մը ըլլալու է այդ մարդուն քով, որովհետեւ չըտեսնուած բաներ ցոյց տուաւ մեզի, կըսէին թէ կայ հին արհեստ մը որ հին ժամանակներըս կը դործածեն եղեր, բայց հիմա անհետացած է կըսեն— : Ծերու նին կարծես թէ երկու երիտասարդաց խօսած ները բոլորն ալ լսեց, պարը վերջանալէն ետքը ըսաւ թէ՛— հին արհեստը ի՞նչ հիման վրայ հաստատեցիք, հինե՞րը աւելի խելացի էին թէ արդի իմաստունները, հինե՞րը աւելի բնութեան դաղանեաց տեղեակ էին թէ նորերը, ահաւասիկ ես հին մարդ մը և դուք նոր երիտասարդներ, ես անուս պառաւ մը, իսկ դուք ուսեալ չափահասներ, մտեցէք ես ձեզ թուաբանական հաշիւ մը առաջարկեմ՝ լուծեցէ՛ք, ըսէ տեսնեմ, ի՞նչ է քու մօրդ անունը—, պատասխանեց երիտասարդը— Թագուհի—, քու անունդ ի՞նչ է, յարեց ծերուկը, Սիմոն, շատ աղէկ, Թագուհին և Սիմոնը թիւերու վերածելով՝ ես քու ծնած թուականդ, ամիսդ, շաբա-

թըդ և օրդ կրնամ հասկանալ, դուք կրնա՞ք այս դործողութիւնը ընել, ո՛չ, — ըրէ որ տեսնեմք— պատասխանեցին երիտասարդները, այն ժամանակ ծերունին թուղթ և մատիտը դըրպանէն հանելով՝ սկսաւ հաշուել այսպէս, Թագուհին և Սիմոնը թուանշաններու վերածելով մէկզմէկու ներքեւ դրաւ:

200020200600400 Սիմոն

91360070007020 Թագուհի

Վերոյ գրեալ խնդիրը լուծելով երիտասարդդին իմացուց որ ինքը ծնած է 1840 թուականին փետրվար ամսուն երկրորդ շաբթուն և երէք շաբթի օրը, երիտասարդին հայրը այնտեղ նստած ըլլալով՝ երբոր լսեց ծերուկէն իր որդւոյն ծնած թուականը, ամիսը և օրը, զարմացաւ ու մնաց, յետոյ ուրիշ երկու երիտասարդներ ալ աղաչեցին ծերուկէն որ իրենց ծնած թուականը և ամսաթիւը գտնէ, այն երկուքին կամքերըն ալ կատարեց ու ելաւ դնաց, արդէն արշալոյսի ժամանակ էր, Վէտիկ փաշայէն վեր ելնելով երբոր իր պանդոկին մտեցաւ՝ ոստիկանութեան երկու զինուորներ զինքը զիմա որեցին, մինչդեռ կը հարցնէին թէ՛ ո՞րկէ կուգաս այն ժամանակ—, այս մարդը փոխանակ պա-

տասխան տալու աներեւոյթ եղաւ, զինւորները երեւակայութիւն կածեցին և մէկզմէկու հետ կռուելու եղան, զինւորին մէկը տեսածնիս մարդէր կսեր ու կը սնդեր, միւսը էջնէ էր կըսեր կըկըռուէր, վերջապէս մէջերնին որոշում մը չըկրցին տալ, առտու եղաւ պահականոց գնացին և իրենց մէկ յառաջագէժ ընկերուն հարցուցին, ընկերը ծիծաղելով մը ըսաւ թէ՛ գիտեմ ես այդ մարդը ի՞նչ Գալոս կըսեն անոր, բե՛ւ Գալոս այն ինչ պանդակը կը բնակի, ինծի ալ պատահած է և ին և ին:

Այս խօսքերուն վրայ զինւորները հանգարտեցան և հանգիստ ըրին . . .

Արբեւայրի կնիկը և օրիորդը Չատկին երկու օրը ուրախութեամբ անցունելէն վերջը երրորդ օրը առաւօտուն անծանօթ հիւր մը կուգայ իրենց, բարձրահասակ և թխաղէժ մէկը, մաքուր հագուած և քաղաքավար շարժուածքներով կը բարեւէ մօրը և օրիորդին, մայրը կ'հարցունէ թէ՛—դուք ո՞վ էք, ես ձեզ չեմ ճանչնար —, անծանօթ մարդը պատասխանեց թէ՛ Յէնի դափու այս ինչ տնէն խրկեցին ինձ, բան մը հարցնելու եկայ և Այն ինչ մարդը ձեր աղջիկը առնելու կամք կընէ, կընդունի՞ք թէ ոչ . . .

Մայրը.— Ատ ըսած մարդդ չեմ ճանչնար՝ Հիւրը.— Աղէկ մարդ մը է, պատուաւոր և հարուստ:

Մայրը.— Շատ աղէկ, տաներէցիս հարցունեմ ինտուեմ քեզի պատասխանը կուտամ :

Հիւրը.— Աւայնելու դործ չ'է, ինծի խրկեցին որ այսօր այս' կամ ոչ պատասխան առնեմ ձեզնէ :

Մայրը.— Հրամանքդ ո՞ր տեղ կը նստիս, տեղըդ սայլիս տուր, վաղն ագտու պատասխանը կը խրկեմ քեզի :

Հիւրը.— Ես վաղը իրիկուան կուգամ պատասխանը կ'առնեմ :

Մայրը.— Տղան ինչ արհեստի մէջէ, ո՞ր թաղը կը բնակի, քանի՞ տարեկան է, հայր և մայր ունի՞ :

Հիւրը.— Արհեստը սեղանաւոր է, թաղը Յէնի դափու կը բնակի, տարիքը քառասունի մօտ է, հայր և մայր ունի,

Մայրը.— Շատ աղէկ, վաղը իրիկուն հրամայեք պատասխանը կ'առնէք :

Հիւրը մնաք բարով կըսէ և դուրս կ'ելնէ օրիորդը մօրը կըսէ թէ՛ — մայրիկ, ես ամուսնանալու միտք չունիմ, թէպէտ ինծի խօսք չիյնար, բայց ան մարդուն հետ խօսածներդ լսեցի և հաս-

կըցոյ որ աղջիկ տալու առնելու խօսքեր կընէք, ինծի համար չէ այդ բանը:

Մայրը, — Աղջիկս, վաղը ես մեռնիմնէ օր-
թան կըմնաս, քեզ ո՞վ պիտի նայի, մանչ զաւկի
պէս չես որ ինքզինքդ կառավարես, դիտես
մենք Աստուծ մէ ուրիշ մարդ չունիմք, ես մեռ-
նիմնէ դուն խեղճ կըլլաս, քանի որ ես կենդա-
նի եմ՝ քեզ տեղաւորելու եմ, որ մեռնիմնէ աչ-
քըս ետիս չի մնայ:

Աղջիկը, — ինծի համար անկարելի է այդ
բանը, ես ո՛չ կամք ունիմ, ո՛չ միտք և ո՛չ յօժա-
րութիւն, իմ որոշումս այս է:

Մայրը դուրս կեղնէ կերթայ իր տաներէցը
կը գանէ, գործը անոր կը յայտնէ և աղջկան դի-
տաւորութիւնն ալ կիմացնէ, քահանան՝ հարցու-
ած փեսայացուն մօտէն ճանչնալուն համար անու-
վրայ դուրսաներով կը խօսի, և կըստիպէ որ աղ-
ջիկը համոզէ և այդ տղին տան, որ դուն ալ հան-
դիստ ընես կըսէ, մայրը քահանային կաղաչէ որ
ինքը տուն գայ և աղջկանը համոզէ, քահանան
երեկոյն գալու կը խօստանայ և կնիկը քահա-
նայէն կը բաժնուի և տուն կուգայ, նոյն իրիկու-
նը քահանան տուն կուգայ և աղջկան շատ մ.
խրատներ կուտայ ըսելով թէ՛ Աստուածային
հրամանն է ամուսնութիւնը, ուստի անոր նա-

խասահմանու թանք պարտիմք հնազանդ իլ, և մա-
նաւանդ դուն որ մօրմէդ ուրիշ մարդ չունիս,
և դուն ամուսնանալով ուրիշի մը պաշտպա-
նութեան և հովանաւորութեան տակը մտնե-
լու ես քանի որ Հայր, Եղբայր և ազգական-
ներ չունիս, այսքան մարդիկ որ կարգըուերեն
մի՞թէ անոնք խելք չունէին, դուն քիչ շատ
կարդացող և հասկացող աղջիկ մը ես, չե՞ս
դիտեր որ զաւակ մը իր ծնողացը հնազանդու-
թիւն ընելու է, մարդ մը, մանաւանդ անտէր
աղջիկ մը, պէտք է՝ իր վերջը մտածէ, մայրդ մեռ-
նիմնէ դուն ի՞նչ պիտի ընես, ո՞վ պիտի պաշտ-
պանէ ու նայի քեզի, քեզ տեսնամ աղջիկս մօ-
րդ խօսքերուն հնազանդիս, կամապաշտութիւն
չընես, սիրտը չ'վշտացնես, վասն զի քեզէ ու-
րիշ ցաւ մը չունի անիկայ, թէ որ մայրդ կը
սիրես՝ անոր կամքը և առաջարկութիւնը ըն-
դունէ և կատարէ, որ ան ալ քեզմով հան-
դիստ ընէ, ես ալ որ այսչափ կը խօսիմ և կը
յորդորեմ քեզի՝ պատճառը միայն քու և մօ-
րդ հանգստութեանը համար է, օրհնե՛ալ է
Աստուած դուն տղայ չես, մտածող աղջիկ մը
ես, իմ խրատներուս պէտք չունիս, քու օգու-
տըդ աղէկ կընաս հասկընալ, որովհետեւ քու
տեղաւորվելովդ մայրդ հանդիստ պիտի ընես:

Տէր հայր, ձեր խօսքերը ճշմարիտ են, սա-
 կայն ինձի երկու անգամ տեսիլք եղած է որ
 ես աշխարհք չի մտնամ, և ինքզինքս Աստու-
 ծոյ նուիրեմ, քանի որ մայրս կենդանի է ա-
 նոր վիճէն չի զատուիմ, և երբոր մեռնի՝ ես
 Երուսաղէմ երթալու դիտաւորութիւն ունիմ
 և այն տեղ իմ կեանքս պիտի անցունեմ, այս
 ուխտս և որոշումս չեմ կրնար փոխել, աշխար-
 հըս ինձի համար ոչինչ է, թէ հարուստ ըլլամ
 և թէ աղքատ, աւ որ համար կաղաչեմ որ սիրտ
 չի հատցունէք՝ և մօրըս սիրտն ալ հանդարտեց-
 նէք, թող ան ինձի համար հոգ չընէ, ես անոր
 (բացի ամուսնական առաջարկութիւնէն) ամէն
 կերպով հնազանդութիւն ըրած եմ, և դարձ-
 եալ մինչև ցմահ առանց զինքը վշտայնելու
 պիտի հնազանդիմ, յիրաւի աշխարհս ատեր
 եմ, միայն մօրս սիրուն համար կը նըստիմ և
 նստեր եմ այս տեղ, ամուսնանալը ինձի հա-
 մար մեռնիլ է, դուք ալ թէ որ չէք ուզեր իմ
 մեռնիլս՝ մի ստիպէք զիս

Այս խօսքերը ըսելով օրիորդը սկսաւ լալ.
 քահանան դարձեալ մէկ քանի խորատներ խօ,
 սելով՝ սենեակէն սրահը ելաւ, և մայրը վարի
 յարկը իջեցնելով օրիորդին խօսքերը պատմեց
 մօրը, և մնաք խաղաղութեամբ ըսելով դռնէն

դուրս ելաւ:

Անցաւ այն գիշերը, մայրը աղջկանը այն
 մասին խօսք մը չընելով միշտ կը մտածեր, հե-
 տեւեալ օրուան իրիկունը հիւրը եկաւ պատաս-
 խան ընդունելու համար, մայրը զատ սենեակ
 մը հրամայելով՝ աղջկան դիտաւորութիւնը և
 որոշումը. և առջի օրուան քահանային դալը,
 խրատելը և ընդունած պատասխանները բոլորն
 ալ մի առ մի յայտնէց, հիւրը խնդրեց որ՝
 —եթէ կարելի է ես ինքս տեսնուիմ օրիորդին
 հետ —:

Մայրը—Երթամ ըսեմ թող ներս գայ:

Հիւրը—աշխատէ որ բերես, երկու խօսք
 ունիմ ընելիք:

Մայրը—Սղջկան սենեակը մտաւ և աղա-
 չեց որ ներս գայ հիւրին հետ տեսնուի:

Օրիորդը—Մայրիկ, ինչ կըսէս ըսէ՝ բայց
 այդ առաջարկութիւնը մի ընեք ինձի:

Մայր—Շատ կըստիպէ կը թախանձէ բայց
 աղջիկը չի հնազանդիր ներս գալու, վերջապէս
 մայրը կուգայ հիւրէն ներողութիւն կը խնդրէ,
 հիւրը վշտանալով սենեակէն դուրս կենէ և
 սանդուխէն վար կիջնայ և առանց—մնաս բարովի
 կերթայ:

Ժամը 12ը անցեր էր հրաշագործ ծերու-

գածին չափ հացը տամ և ստակ չի պահանջեմ, Ստուգած կեանք տայ աղային ես ստակս կառնեմ միշտ:

Ծերուկը— Մյն աղային տնունը ինչէ և ո՞ւր տեղ կը բնակի:

Հացագործը— Ի՞նչ պիտի ընես, ես ըստակս անկէ կառնեմ կոր Ստուգած չէն պահէ:

Ծերուկը— Ետ աղէկ, Ստուգած քեսէին պէրէքէթը տայ, Ստուգած անանկ մարդիկները պակաս չընէ:

Հացագործը— Ողջ ըլլաս հաճի պապայ ըսելով դռան առջեւէն կը բաժնուի, ծերուկը փոխանակ փողոց ելնելու՝ սանդուխէն վեր կելնէ և սենեակը կը մտնայ, մատիտը ծոցէն կը հանէ թուղթի մը վրայ խել մը անուններ գրելով՝ կոնք մը ջուր կը պահանջէ, օրիորդը խկոյն կառնէ ջուրը կը բերէ, թուղթին վրայի գրուած անունները մկրատով զատ զատ կտրելէն վերջը կոնքին մէջ կը նետէ, այդ անունները երեսուն հատի չափ կային, գրպանէն պզտիկ սրուակ մը հանելով՝ (սպիտակ սնդկի նմանութիւն ունէր) կաթիլ մը ջրին մէջ կը կաթեցնէ և կը խառնէ մատովը, թուղթերուն մեծ մասը անհետանալով մէկը միայն կը մնայ, որուն

վրայ գրուած էր « Սըրահամ », այս գործողութիւնէն վերջը՝ ուրիշ սպիտակ կտոր մը թուղթ կընետէ ջուրին մէջ, և գրպանէն կարմիր թուղթի մէջ փաթուած մոխրագոյն փոշի մը հանելով վրան կը ցանէ, և ճկոյթովը կը խառնէ մինչև տասը բոպէ, այնուհետև կը հանէ, որուն վրայ սա պէս գրուած էր. « Պատմածեան », Ծերուկը այս գործողութիւնով կը հասկնայ թէ՛ այդ խեղճ ընտանիքին ճրի հաց ուղարկողը Ս. Պ. Ս. զան է եղեր, բայց ծերուկը այս մտքը չի ճանչնար և կուզէ որ հետը ծանօթանայ և իր շնորհակալութիւնը յայտնէ, բայց այս գործողութիւնը դիշերուան ձգելով իր գործին կերթայ և կը պատուիրէ որ ընթրիքի չըսպասեն. — Ժամը երկուքին պիտի դամ՝ — կըսէ:

Պիշերը ճիշդ երկրորդ ժամուն կուգայ ուրախ գէմքով մը կը նստի, և քիչ մը ժամանակ անցնելէն վերջը կըսէ թէ՛ — ձեզի ճրի հաց ուղարկող աղան այս տեղ պիտի բերել տամ որ տեսնաք, և չըլլայ որ վախնաք, որովհետև ես ալ կը փափաղիմ այդ մարդը ճանչնալու. — , այս խօսքերը ընելէն ետքը խընկանոցը կուզէ և անոր մէջ մէկ քանի մոխրախառն կրակներ դնել տալով բերել կուտայ

և առջին կը դնէ, ճերմակ թուղթի վրայ « Ս. և Պ. », տառերը սնդկախառն գեղով մը գրելով կրակին վրայ կը պըտուտցնէ, այնչափ որ, մինչև տառերը անհետացան թղթին վրայէն և միայն ճերմակ թուղթը մնաց, այնուհետև այն կոնքը ջրով բերել տալով սպիտակ թուղթը մէջը ձգեց, և երեք տեսակ գեղ լեցուց մէջը ու խառնեց. այդ գեղերուն առունը արաբերէն (سندكس) և անգլերէն կըսեն կարծեմ, վերջը մօրը և օրիորդին դառնալով ըսաւ, չըլլայ որ վախնաք, ձեր բարերարը հիմա այն անկիւնէն դուրս պիտի ելնէ որ ճանչնաք ո՞վ ըլլալը . . . : Յերուկը Ս. րաբերէն սա խօսքերը արտասանեց երեք անգամ, (سندكس اسفوت هتسيف) բարերար ազան կամաց կամաց տեսնուելու սկսաւ և անկիւնը կայնեցաւ, ծերուկը խեղճ ընտանիքին կողմանէ իր խորին շնորհակալութիւնները յայտնեց. և բարերարը երեք անգամ գլուխը ծռելով աներևոյթ եղաւ առանց բառ մը արտասանելու, այս գործողութիւնը և ցոյցը ժամ ու կէս տևեց, մայրը և օրիորդը հանգստացան. յետոյ ծերուկը կարդալու նստաւ :

Օրիորդը այն գիշերը երազը կը տեսնայ որ մադաղաթի վրայ գլուած գիւղը առեր

կը կարդայ, որուն մէջ խելքէ միտքէ դուրս բաներ գրուած էին, իբրև թէ օրիորդը կը հիանայ այն գրուածքներով, և հետեւեալ առաւօտուն կ'երնէ տեսած երազը մօրը կը պատմէ, մայրը խորհուրդ կուտայ որ այդ երազը ծերուկին չի յայտնէ, ծերուկը իր սովորութեանը համեմատ առաւօտուն կ'երնէ և իր գործին կերթայ և կըսէ որ ամիս մը իբնն չի սպասեն, օրիորդը խոհանոցին գործերը վերջացնելէն ետքը վերի յարկը կերթայ պահարանը կը բանայ և գիրքը կառնէ կըսկըսի կարգաւ. յիրաւի գիշերուան տեսած երազին նման խելքէ դուրս բաներ կային գրուած, օրիորդը զօր ու գիշեր կը նստի և վերջապէս 355 երեսներէ բաղկացեալ գիրքը երեք շաբաթուան մէջ կը վերջացնէ և կարդացածը մէկ կողմանէ մօրը կը պատմէ, օրիորդը ինքնիրեն կը ցաւի և ափսոս կըսէ՝ մինչև այն օրը գիրքը աչքէ չանցունելուն համար :

Միտքը կը դնէ որ մինչև ծերունւոյն դալը այդ գիրքին հասկանալի մասերը արտագրէ և անոնց վերծերովը զբաղի, որովհետև տես այդ գիրքին մէկ մասն ալ արաբերէն գրուած էին: Աւստի ժամանակ չ'կորսընցունելով ճերմակ թուղթէ տետրակ մը կը չինէ և օրի-

նակելու կը պատրաստուի, այս ժամանակներս
 րըս ազնուական Տիկնոջ սպասաւորը կուգայ
 և տուն կը հրամայնէ, ասոնք կէս օրուան ճա-
 շերնին ընելով Ազնուականին տունը կերթան,
 և անկէ մեծ պատիւ և ընդունելութիւն կը
 տեսնեն, Տիկինը միշտ մը Սյրի կնկան հետ
 առանձին կը մնան, և օրիորդին ամուսնու-
 թեան վրայ խօսք բացուելով հնարք մը կը
 մտածեն, Ազնուական տիկինը կըսէ որ—տա-
 սըն և հինգ օր մեր տունը թող կենայ օրի-
 ուրդը՝ ես անիկայ կը համոզեմ—:

Այս առարկակութիւնը օրիորդին կըլուի,
 բայց առանց մօրը այնտեղ մնալու յանձնառու
 չըլլար, Տիկինը շատ կաշխատի համոզելու՝
 բայց օրիորդը անդրդուելի ինքնութեամբ խօս-
 քին վրայ կը կենայ, վերջը Տիկինը կըսէ որ
 —եկած շաբթու ես ձեզի խապար կընեմ
 եկէք և ամիս մը մնացէք այստեղ—, կինը
 և օրիորդը շնորհակալութիւն յայտնելով
 դուրս կեննեն, ճանապարհին դալու ժամանակ-
 նին մայրը օրիորդը կը յանդիմանէ կամակո-
 բութեանը ու յամառութեանը համար:

Օրիորդը կաճապարէ որ այն դիրքը արտու-
 գրէ և մէջի գրուած սքանչելեաց փորձերը ըրաւ,
 ուստի պատմենք հիմայ աներեւոյթ, ըլլա-

լու անհաւատալի խնդիրը, որ մեր թշուառ օ-
 րիորդը քննած և փորձերովը տեսած է:



Բ

ՆՈՐ ԳԻԻՏ

ԱՆԵՐԵՒՅՅԹ ԸԼԼԱԼՈՒ

Օրիորդը գերբը սկիզբէն մինչեւ վերջը
 կարդալէն զկնի, երբ օրինակելու սկսաւ՝ շատ
 դժուարութիւն կրեց, որովհետեւ մէջը արա-
 բերէն անհասկանալի շատ խօսքերու հանդի-
 պեցաւ, երեք օր շարունակ օրինակելէն վեր-
 ջը՝ չորրորդ օրը մայրը հարցուց իրեն թէ՝—
 ինչո՞ւ այդչափ կը շարջարուի—, օրիորդը պա-
 տասխանեց թէ—մինչեւ հիմայ նմանը չը
 տեսնուած արհեստներ կան մէջը, և կուզեմ
 որ օրինակելէս վերջը փորձերն ալ ընեմ և
 սովորեմ, թերեւս օր մը պէտք ըլլայ—:

Մայրը ձայն չը հանելով՝ օրիորդը գրու-
 թիւնը շարունակելու ետեւէ եղաւ մինչեւ

տասն և հինգ օր, տասն և վեցերորդ օրը երեկոյեան յանկարծ ծերունին եկաւ, օրիորդը բարեբաղդաբար գիրքը սովորական տեղը պահեր էր, կերակուր ուտելէն վերջը՝ օրիորդը այդ գիրքին նկատմամբ մէկ քանի հարցումներ ըրաւ ծերուկին, ծերուկը չի ուղեց պատասխանել, և մինչեւ անդամ տրտունջ յայտնեց օրիորդին գիրքը կարդալուն համար, օրիորդը շատ աղաչեց թախանձեց, վերջապէս ծերունին զիջաւ մէկ քանի բացատրութիւններ տալու, և յաւելցուց ասելով թէ՝—ես քառասուն տարիի չափ եղաւ որ այդ արհեստին ետեւէն ինկած եմ շատ դրամ վասնեցի, շատ խելք յողմեցուցի, շատ փորձեր ըրի, շատ վտանգներ անցուցի, բայց հազիւ թէ մէկ երրորդ մասը սովբեցայ, այդ արհեստին մէջ այնպիսի դժուարութիւններ կան որ՝ մարդուս մահուանը հետ կը հաւասարին, բայց ի՞նչ պէտք է ի՞նչ օգուտ քեզ համար, քանի որ պիտի չը կրնաս բան մը հասկանալ և չի հասկանալով օգուտ ալ պիտի չկրնաս քաղել և այդ արհեստը գլխաւորաբար երկու բան կը պահանջը մարդէս, Սքոբիւն և հարստութիւն, առանց այս սկզբանց և յատկութեանց անկարելի է այդ արհեստին ամէն գաղտնեացը ան-

ղեկանալ, ես ունէի մէկ ընկեր բարեկամ մը, երիտասարդ հասակին մէջ ինձ հետ այս արհեստով կաշխատէր, երբոր բաւական հմուտ թիւն ունեցաւ, այնուհետեւ չարաչար դործածելու սկսաւ, մինչեւ որ անարդ մահուամբ իր կեանքը վերջացուց, երիտասարդաց համար վտահութիւն չըկընար ըլլալ, վասն զի եթէ այս արհեստին մէկ փոքր մասին որ տեղեկանան, այնուհետեւ իրենց հաճոյիցը համար դործածել կուզեն, այս առթիւ ձեզի բան մը պատմեմ:

Ժամանակաւ Յակոբ պատրիարքը, որ կար մեծահամբաւ Ռազուպ փաշայի որով Յակոբ պատրիարքը այս արհեստը աղէք իտե՛ւ եղեր, Ռազուպ փաշան ալ գիտնալուն հանձնը մէկը մէկու շատ սիրելի եղած էին, Յակոբ պատրիարքը Յարութիւն անդունով փոքրաւոր մը կուներնայ, այս ալ հետեւելով բաւական բան կը սովրի, երբոր աներեւոյթ ըլլալու գաղտնիքին վերահասու կըլլայ, պատրիարքարանին մօտը եղած շահիկ կանանց բաղնիքը կը մըտնայ և բաղնեւորաց անհանդստութիւն կըտայ կը վախցնէ և շատերն ալ ցաւերու կը հանդիպին, այս փոքրաւորը քանի մը անգամ այդ յիմարութիւնը ընելէն վերջը՝ դործը Բ. դրս Կ

ականջը կը հասնի, և այս արհեստին հմուտ Տէվրիչ մը գտնելով փոքրաւորը ձերբակալ կընեն և կը բանտարկեն: Յակոբ պատրիարքը երբ կիմանայ թէ իր փոքրաւորը ասանկ յանցանքով մը բանտարկուեր է և կախաղան պիտի ելնէ, իսկոյն Ռազուպ փաշային նամակ մը կը գրէ և կը խնդրէ որ եթէ կարելի է փոքրաւորին յանցանքը միայն բանտարկութեամբ վերջանայ, Ռազուպ փաշան կը գրէ Յակոբ պատրիարքին որ այս գործին համար ձեր խնդիրը անկարելի պիտի ըլլայ, որովհետեւ փոքրաւորդ շատ դատախազներ ունի, և ես ասանկ յանցանքի մը համար միջնորդութիւն պիտի չը կըրնամ ընել, միայն մէկ քանի օր կախաղան ելնելը կ'ուշացնեմ, մնչեւ որ դուն մոգական արհեստով փոքրաւորդ ազատես, այս է իմ քեզի տալիք խորհուրդս, Յակոբ պակրիարքը այս նամակը ընդունելէն վերջը երեք օր երեք գիշեր քովը մարդ չի հանդիպցնելով մոգական արհեստը գործելու ետեւէ կըլլայ ու կը վերջացնէ, յետոյ Ռազուպ փաշային իմաց կ'տայ թէ — գործը կարգադրուած է, միայն թէ փոքրաւորս հեռու տեղեր կախելու հրաման չըլլուի՝ որպէս զի դժուարութիւն չկրեմ — կըսէ, Ռա-

զուպ փաշան հրաման կընէ որ Էլ-Էնէ թաղի բաղնիքին առջեւը կախուի, Յակոբ պատրիարքը այս բանին ուրախանալով շնորհակալութեան գիր մը կուղարկէ Ռազուպ փաշային, երկու օր վերջը փոքրաւորը կը բերեն բաղնիքին առջեւը և կը կախեն իտեսիլ հասարակութեան, երեք օր կախուած մնալէն վերջը վար կառնեն և կը թաղեն, բայց կախուածը պատրիարքին փոքրաւորը չէր, այլ բաղնիքի հաստը կոճղ մը էր, որն որ հասարակութիւնը ամենեւին չէր դիտեր, Յակոբ պատրիարք այս արհեստին մէջ ունեցած արտաքոյ կարգի հմուտութեամբ փոքրաւորը անբերելոյթապէս մահուընէ ազատեց և ութը օրի շափ պատրիարքարանի մէջ գաղանի պահելէն վերջը Երզնկայի կողմերը խրկեց, և Էլ-Էնէ բաղնիքին մինչեւ ցայսօր քէլէ կայ ըսելուն պատճառն ալ այս եղած է, անոր համար աղջիկս քեզ կը յորդորեմ որ այդ տեսակ արհեստներու հետամուտ չըլլաս, ես ինքս մէջը գտնուելով շատ զղջացած եմ, հանգստութիւնս կ'որսնցուցած եմ, քառասուն տարիներէ ի վեր թախառական կը պըտըտիմ, ընտանիքս իմ գտնուած վիճակէս տժգոհ, ասանկ արհեստներու մէջ գտնուող ու գործու-

զը ընտանիք ունենալու չէ, դրամական ապահովութիւն ունենալու է, մարմինը և կազմուածքը առողջ ըլլալու է որ կարողանայ այդ արհեստէն բան մը սովորելու, դուն որ դրամ չունիս և կազմութիւնդ չի ներեր, տարիքդ անչափահաս, մինչդեռ մէկ քանի անյարմարութիւններու ենթակայ եղած ես, ուստի այս արհեստէն շատ վնաս պիտի կրես, նիւթապէս, բարոյապէս և ֆիզիքապէս, մէկ պակասութիւնըս այն էր որ դիրքը այստեղ թողուցի ես, այդ դործը հակընդէմ համար չէ

Ծերունին այս տեսակ շատ մը խօսքեր ընելէն վերջը օրիորդը սկսեց մէկ քանի արարելէն հարցումներ ընել, ծերունին իկղբան չուզեց պատասխանել, վերջը օրիորդին աղաչանապը չ'դիմանալով ամէն հարցումներուն պատասխան տուաւ միտքերը բացատրեց և հաշիւները ցոյց տուաւ, օրիորդը ասոնց ամենը չի կրնալով միտքը ըմբռնել՝ մի առ մի դրի առաւ, այնպէս գեղեցիկ ուղղադրութիւն մը ունէր որ կարծես թէ շատ տարիներ ուսման ծառայած ըլլայ, ծերունին թէեւ անխոհեմ մտրդ չէր որ այդ տեսակ մտգական արհեստները երիտասարդաց և օրիորդաց սովորցնելու բայց օրիորդին խելացութեան եւ բարեորտու-

թեանը վստահ ըլլալուն և մանաւանդ չափէն աւելի աղաչելուն համար, ինչ որ հարցուց նէ պատասխանը տուաւ, օրիորդը դեմնէն ոսկի դրամի պէս կուրախանար:

Այն իրիկունը քիչ մը ժամանակ ալ նրատելէն վերջը ելան հանդստացան, բայց ծերունին իր սովորութեանը համեմատ նստաւ գիշերը մինչեւ արշալոյս կարդաց, դարձեալ այն տէրվիչը ներկայանալով մէկզմէկու հետ խօսեցան լարթին արարելներով, ամեն խօսակցութեանց վերջը՝ տէրվիչը մէկ մէկ մետաղի կտոր ծերուկին ձեռքը կուտար և աներեւոյթ կըլլար, ծերուկը արշալոյսի ժամանակ պառկեցաւ, և երկու ժամ հանգստանալէն վերջը՝ անոնց հետ միտակալ առաւօտուն ելաւ, սուրճը խմեց և այրի կնկանը ըսաւ որ — տուն մը ճարէ և այս տունէն շուտով ելնուի, ապա թէ ոչ մէկ քանի օրէն պիտի քանդուի — կնիկը այս լսելով ծերուկին հետ դունէն դուրս ելաւ ժամ դնաց ժամակոչաց հարցուց փնտռեց որ տուն մը ճարէն, վերջապէս երկու օրուան միջոցին մէջ տուն մը ճարելով ելան ու չուեցին. չորս օր վերջը տանը մէկ կողմը ծուլով փլաւ վերջացաւ, յայտնի է որ կանայք խորհրդապահ չեն կըրնար ըլլալ, ծերուկին

այն մարգարէութիւնը իրենց դրացիներուն պատմեցին, ատոնց մէջէն հետաքրքիր մարդ մը ուզեց այդ ճերուկին հետ տեսնուիլ, բայց տան մէջ մէկզմէկու չ'կըրնար պատահելով՝ բնի Կաթարուի տեսնուեցան, հետաքրքիր մարդը ապագայ դուշակելու մէկ քանի առարջարկութիւն ըրաւ, բայց ճերը իմ հասկանալու և դիտնալու բանս չէ ըսելով՝ վրայէն կ'հեռացնէր, մարդը շատ աղաչեց խնդրեց ստակ խոստացաւ բայց չ'կըրցաւ համոզէր էր, որովհետեւ ճերը աչքածակ մարդ չէր և ստակով գործ տեսնելու սովորութիւն չունէր այն մարդը այնչափ գնաց եկաւ որ ճերուկին սիրտը շինեց և խնդրած ապագան դուշակել տուաւ քառասուն և մէկ օր պայմանաժամ դնելով, որն որ պիտի կատարուէր, երբ քառասուն և մէկերորդ օրը լրացաւ, մարդը առաւօտեան կանուխ ելաւ ճերուկին դնաց և հարցոց թէ՛ — այսօր պիտի կատարուի՞ դուշակութիւնդ թէ ոչ —, ճերունին պատասխաներ թէ՛ — այսօր երեկոյեան պահուն պիտի կատարուի —:

Թէ ի՞նչ էր մարդուն խնդրած ապագայն և կատարուելիքը, և ահա այս խնդրոյն բացատրութիւնը ծանր ըլլալով չեմք ուզեր անոր մանրամասնութեանցը մտնել, միայն

խընդրոյն սկզբնատառերը դնելով կը բաւականանամք, վ. . . . ծ , . Ա. . . . կ և ո կ վ Ս պ յ կ հ վ Դ (1)

Սյս էր կատարուելիքը և իրօք ալ կատարուեցաւ, սակայն այս գործը մարդուն և ճերուկին մէջ տեղը մնաց, այսու ամենայնիւ մարդուն ընտանիքը և չափահաս որդիքը խընդրոյն տեղեկացան, մենք այս պատմութիւնը կամ գէպքը նկարագրելով՝ դիտեմք որ ընթերցողները ասով պիտի չը կըրնան բան մը հասկընալ, ուստի մեր գլխաւօր հասկըցնելիքը օրիորդին դրած եւ քիչ կամ շատ փորձերը տեսնուած գազոնիքները պիտի յայտնեմք, սակայն այն մարդուն անյեալ վիճակին եւ ակընկալած եւ ձեռք բերած ապագային վրայ մասնաւոր տեղեկութիւն մը տալով՝ ուրիշ դադարը մը տալու ալ չեմք վարանիր, մարդը բնիկ կ. Պօլսեցի հարուստ ոսկերիչ մը էր, եւ ամուսնացաւ 1845 թուականին, երկու արու

(1) Սյսն սկզբնատառերուն միտքը բացատրողը 25 օսմանեան լիրա պարդ եւ պիտի ստանայ

զուակներ ունեցաւ երեք տարուան միջոցին, մարդը ամուսնանալէն եօթը տարի վերջը հիւանդացաւ եւ երկու տարի շարունակ յանկողնոյ կը ծառայէր, այնչափ դրամ մսխեց որ գրէթէ հարստութեան չորրորդ մասը փճացաւ, հազիւ հազ յանկողինէն ելաւ եւ երկու տարի ալ տունը նստելով եւ օգտփոխութիւն ընելով ժամանակ կանցներ, յանկարծ կլինը հիւանդացաւ եւ վեց ամիս շարշարուելէն յետոյ մեռաւ, մարդը երեք տարի այրի մնալէն վերջը անպիտան օրիորդի մը հետ ամուսնացաւ, այս երկրորդ կնիկը անանկ չուայլ բնաւորութիւն մը ունէր որ էրկանը սնանկութեան եւ աղքատութեանը պատճառ եղաւ, ինքն ալ եւ որդիքն ալ թշուառութեան մէջ ընկըզմելով մարդը երկրորդ կնիկէն չորս հատ աղջիկ զուակ ունեցաւ, ասոնց թշուառութիւնը անկարելի է նկարագրել, թէ պէտեւ հարուստ աղբաւաններ ունէին, բայց կնկան չար ու չուայլ բնաւորութեանը համար չէին ուղեր երթեւեկել, այսու ամենայնիւ երբեմն երբեմն օգնութիւններ կընէին, կընիկը ոչ թէ միայն չար ու չուայլ էր, այլ սաստիկ նախանձութիւն ալ ունէր, օրինակի աղաղաւ, եթէ մէկը իրմէ աղէկը ուսեր եւ իրմէ դեղեցիք հագուէր կը նըս-

տէր կուլար եւ էրկանը հետ կը կըռուէր եւ սըզտիկ տղաքներուն պէս ոխ ու քէն կը պահէր, խեղճ մարդը միշտ խրատ կուտար որ այդ բնաւորութիւնը թողու եւ գանուած վիճակին դո՛հ ըլլայ, բայց նա միշտ հակառակը կը գործէր, օր մը իրենց մօտ աղբականներէն մէկը Մ. գիւղի ծովեղերքը տուն մը առաւ, երբ լսեց այդ կնիկը՝ նախանձէն ինքզինքը պիտի սպանէր, բարկութենէն ութը օր հիւանդ պառկեցաւ, մարդը տան կարասիքներէն մէկ երկու կտոր բան ծախելով բժիշկ բերաւ, դեղերը հոգաց եւ կնիկը առողջացուց, կընիկը երբ հիւանդութենէն առողջացաւ ելաւ Գարա կէօմբիւկիւ Ստուաճածնայ եկեղեցին գնաց եւ իր երկու աղջիկը միայն հետը տանելով երեք զիշեր այն տեղ պառկեցաւ, վերջին գիշերը աղկանը մէկը երազին մէջ դեղեցկադէմ կին մը տեսաւ վայելուչ զգեստներով եւ գլուխը սպիտակ պսակ մը ունէր դրած, եւ ըսաւ աղջկան, « մօրդ իմացուր որ վատ բնաւորութիւնները իրմէ հեռացնէ, ապա թէ ո՛չ, աւելի թշուառութեան պիտի մտնուիք, աղջիկը առաւօտեան մօրը պատմեց տեսած երազը, մայրը լալով ուխտ ըրաւ որ ալ այնուհետեւ իր բոլոր վատ յատկութիւններէն մերկանայ եւ մարդալայել կի-

Նօք ապրի, գանուած վիճակին դոճ ըլլայ իր
 գըրայիին ունեցածին, հաղածին ու կերածին
 չի նախանձի, երկանը հետ քաղցրութեամբ վա-
 րուի, տղայական սովորութիւնները թողու եւ չն
 եւ չն:

Սյս ամենը ուխտելէն վերջը տուն եկաւ իր
 երկու աղջիկներով, ամիս մը անցաւ միջոցը՝
 մարդը տեսաւ որ կնիկը բոլորովին բնաւորու-
 թիւնը փոխեր է, կարծես թէ հրեշտակային բնա-
 ւորութիւն զգեցեր է վրան, մարդը ուրախանա-
 լով իր մտերիմ ազդակներէն մէկուն յայտ-
 նեց այս բանը, յետոյ գործի մը ետեւէ ըլլալու
 աշխատեցաւ, որովհետեւ քանի մը տարի թա-
 փառական կը պըտտեր, եւ իր երկու արու որ-
 դիքը պըզտիկ դործի մը մէջ ըլլալովնին՝ քիչ շատ
 առններուն օգնութիւն կընէին, ինչպէս որ
 քիչ մը առաջ պատմեցինք՝ այդ մարդը ծերու-
 կին պատահելով անոր մոզական աշխատու-
 թեամբը դործը կարգադրուեցաւ և հետզհետէ
 ընտանեկան վիճակը ապահովցնելով նեղելոյ
 օգնութեան կ'հասնէր:

Մարդը նեղութեան ժամանակը իր հա-
 րուստ բարեկամներէն մէկուն նամակ մը խրկեց
 որն որ օգնութիւն կը խնդրէր անկէ, ժլատ հա-
 րուստը ո՛չ օգնեց եւ ո՛չ պատասխան տուաւ ա-

նոր, մարդը յուսահատ վիճակի մէջ մնալով
 ստիպուեցաւ երկրորդ նամակ մ'ալ ուղար-
 կել, ժլատ հարուստը դարձեալ չ'օգնեց անոր
 և — ապրիլէն իսկ մեռն — ըսելով նամակը
 պատուեր եւ նետեր էր, այս ժլատ հարուստը
 վերջին ժամանակներս ֆօնտօներէն սաստիկ
 հարուած մը կրելով կը սնանկանայ, կ'աղ-
 քատանայ և յուսահատութեան վերջին ծայրը
 հասնելով ինքզինքը մեռցունել կը մտածէր,
 բարի մարդը լսելով իր երբեմն ժլատ բարե-
 կամին սնանկութիւնը, իրեն կանչել կուտայ
 և անոր ժամանակին ըրած վատութեան փոխա-
 րէն շատ մը յուսադրիչ խօսքեր ընելն վեր-
 ջը՝ մինչեւ գործերուն կարգի դրուիլը ամեն
 ամիս տանական լիրա տալը խօստանայ, սնան-
 կացած հարուստը ամօթէն ինչպէս շնորհակալ
 ըլլալը չ'գիտնար, բայց բարի մարդը անցեալ
 ժամանակը վեհանձնաբար չ'յիշելուն համար
 սնանկացեալ հարուստին սրտին մեծ ցաւ կըլ-
 լայ, որովհետեւ մարդ մը եթէ կուզէ իր ան-
 միտ թշնամոյն յաղթել վատութեան դէմ բա-
 րիք ընելն ուրիշ գեղեցիկ միջոց չի կրնար ըլ-
 լար, օրինակի համար, Յովսէփ գեղեցիկ եթէ
 ուզէր իր թշնամի եղբայրները կրնար սպան-
 նել, բայց չըրար, այլ ընդ հակառակը բարիք

ըրաւ անոնց, վասն զի չարութեան փոխարէն չարիք հատուցանելը՝ տկար և անբարոյական մարդու գործ է:

Այս իրողութիւնները պատմելով սա իմացանել կուզեմք որ՝ մարդ մը իր ունեցած հարստութեամբը թող չի պարծենայ և անարդ մետադին թող չ'ապաւինի, աղքատն ալ իր չքաւորութեանը համար թող չի յուսահատի, որովհետեւ երկուքն ալ իրենց անդրադարձութիւնն ունին, երկուքն ալ ժամանակաւոր են և երբեմն երկուքն ալ մշտնջենաւոր կըրնան ըլլալ, մարդոց սրտերէն ու դործերէն կախեալ են, մենք երեք գլխաւոր միջոց կը գտնուք մարդոց հանգստութեանը համար, ու խորոսիւն, բարեարդութեան և բաւականութեան. այս երեք յատկութիւնն ունեցողը կարելի եղածին չափ հանդիստ կընայ անցունել իր կեանքը. դուն կը տեսնես անդին փառամով ու անձնապաշտ հարուստը՝ ոսկեոյ զօրութեամբ երկինքն ու աշխարհ քանդել ու շինել կերեւակայէ, անանկներուն կորուստը մօտ է, դու անոնց հարստութեանը մի՛ հաւատար. Աստուած հարստութիւնը անոնց փորձելու համար տուաւ, և տեսաւ որ անոնք որ ծածկուան կերպը չեն գիտեր, աղքատը օսնակիս ընկել կուզեն,

և իրենց կամքն ու կիրքը իբրեւ Աստուած կը պաշտեն, և փոխանակ բարեգործութեան՝ անիրաւութիւն կը գործեն, փոխանակ մարդասիրութեան՝ ամարդութիւնն ու վատութիւնը կը սիրեն, փոխանակ բարի մարգիկը ջատագովելու, չարերուն գործակից կըլլան, անանկներուն մահը վաղահաս է, և որդւոց թըլուտութիւնը կայծակի արագութեամբ կը հասնի, դու ո՛վ աղքատ մխիթարուէ՛, համբերէ՛, մի՛ յուսահատիր, քաջալերուէ՛, բարի միջոցներ մտածէ, Աստուծոյ ողորմութեանը ապաւինէ. թէև կես անօթի կէս կուշտ, մի՛ վախնար, հարուստէն աղէկ է քու վիճակդ, այն ո՛չ մի բանով դո՛՛ս չէ՛, ոչ մի բանով ուրախ չէ՛, ոչ մի բանով հանդիստ չէ՛, սէր ըսածդ չի տածեր իր սրտին մէջ, ոչ Աստուծոյ և ոչ իր ընտանեացը վրայ, իրն համար մխիթարութիւն չունի, ամեն բանէ միշտ կը վախնայ, մահուան ձայնը որ լսէ՝ սիրաբ կը տրոփէ. գողին ձայնէն ջիղերը կը թուլանայ, հիւանդութեան ձայնէն՝ դէմքը կը թալկանայ, վերջապէս ամեն ժամու և ամեն վարկերի մէջ ահ ու դողի մէջ է, անանկներուն հանգստութիւնը զերեզմանի մէջ ալ տարակուսելի է:

Գու ո՛վ աղքատ, թէև թշուառ ես՝ բայց

երջանիկ ևս, որովհետեւ քու ընտանիքիդ ու որդւոցդ վրայ սէր ունիս, կը գուրգուրաս, գիշերները հանգիստ առանց վախի՝ կը ննչես, թէեւ չոր հաց կամ սոխ հաց է կերածդ, բայց ստամոքսի տկարութիւն և անճնական հիւսանգութիւն չունիս, թէ և հազնելու լաթ և վառելու ածուխ չունիս, բայց ձմեռուան ցուրտը քեզի չի ներգործեր որչափ որ հարուստներուն, թէ և անոնք շատ տեսակ ուտելիք և ըմպելիք ունին, բայց քեզի չափ ախորժակով բան մը չեն կրնար ուտել, թէ և իրենց մեծութեանց ու ճոխութեանցը համար բժիշկները անպակաս է տուներնուն, և դուն տատը փարայի սպեղանիէն զուրկ մնացեր ևս, վստահ եղի՛ր դու անոնցմէ առողջ ևս և անոնցմէ շատ պիտի ապրիս . . . :

Ս.յս խօսքերով հարուստները թշնամանել չէ մեր նպատակը, այլ անոնց վիճակը նկարագրել է. և անոնցմէ ոմանց անղգայութիւնն և անաարբերութիւնը յայտնել է մեր գլխաւոր նպատակը, թէպէտեւ մեր նիւթէն շեղեցանք այսու ամենայնիւ մինչեւ հիմա խօսածներէս ալ կը յուսամք որ ընթերցողք օգուտ կրնան քաղել՝ եթէ իրենց քմաց համեմատ դանեն, որովհետեւ չիկայ այնպիսի հրատարակութիւն մը

որ գոնէ անոր մէկ նիւթը, մէկ տողը կամ մէկ բառը մարդուս բարոյականութեանը չի նըպաստէ :

Օրիորդին արտագրաց դրքին մէջ շատ տեսակ Սրաբերէն դրուած խօսքեր կային զոր ինքը չը հասկնալով դժուարութիւն կը կրէր, երբոր իրիկուն մը ծերունին դարձեալ տուն եկաւ, շատ աղաչեց անոր որ գոնէ մէկ քանի բան իրեն սովբեցնէ մէջէն, վստահացնելով որ՝ սովրածները միշտ ՚ի բարին կը դործածէ, և թէ իրեն անունն ալ անմահ կը մնայ աշակերտ մը հասցնելով, ծերունին օրիորդին թախանձանացը զիջանելով՝ մէկ քանի գլխաւոր բաներ սովբեցուց օրիորդին հետեւեալ դործողութեամբ .

Ս.Ռ.Ս.ՋԻՆ ԿԵՐՊ

Ապրիլ ամսուն սկիզբը կենդանի իժ (Ե. Կեբե եւանը) մը առնելով գլուխը մարմինէն կը դատես, և բերանը բանալով անոր մէջ սեւ սիսեռ մը կը դնես, և նոր թաղարի մը մէջ թարմ և դեղնագոյն հող լեցնելով՝ իժին գլուխը նոյն թաղարին մէջ կը թաղես և մինչեւ սիսեռին բողբոջիլը ամեն առաւօտ 50 արամ հաւու արիւն կը թափես, երբոր սիսեռածաղիկները

տեանուին՝ թաղարին վրայ տասնական տրամ-
 ծծումբի ջուր կը լեցնես ամեն առաւօտ մինչև
 սիսեռներուն հասուննալը, այնուհետեւ դոր-
 ծողութիւնը դադարեցնելով՝ կըսպասես, որուն
 վրայ պիտի տեսնես 3—5 հատ սիսեռներ,
 սիսեռահնձան ժամանակ դուն ալ կը քաղես
 այն սիսեռները և կծու քացախին մէջ 24 ժամ
 կը պահես, այնուհետեւ կը հանես և ծըծըմ-
 բախառն սնդիկի մէջ կը դնես մինչև 48 ժամ
 յետոյ կը հանես մաքուր գաւաթի մը մէջ դը-
 նելով մէկ մատնաչափ լէմոնի ջուր կը լեցնես
 և վրան աղէկ կերպով կը դոցես որ օդ չը մըս-
 նայ, 12 օր պահելէն վերջը կը հանես և հայե-
 լին ձեռքդ առնելով սիսեռին մէկը բերանդ
 կը դնես և հայելիին մէջ կը նայես թէ՛ ինքը-
 դինքդ կը տեսնես թէ ոչ, եթէ չտեսնես՝ նե-
 տէ այն սիսեռը և ուրիշը առ բերանդ, վեր-
 ջապէս որ սիսեռով որ տեսնուիս հայելւոյն
 մէջ՝ աղէկ պահէ, բայց այս դործողութեանց
 ժամանակ քսան և մէկ օր ծոմապահութիւն
 պէտք է դիշեր ու ցորեկ, զի առանց անորան-
 կարելի է յաջողուիլ. նոյն գրքին մէջ թուա-
 կան մը կայ նշանակուած՝ զոր Սողոմոնէն կըս-
 կըսի և անոր ըրած իմաստուն արհեստները և
 դործքերը կը նկարագրէ, այդ գրուածոց և

գործողութեանց մէջ խելքէ դուրս արհեստ-
 ներ կան որ՝ պահ մը մարդս կը հիանայ, և
 պահ մը ալ սուտ կամ ճամարտակութիւն կը
 կարծէ, սակայն առանց իրի և պատճառի այն-
 չափ թուղթեր մտտել, և այնչափ մաթիմա-
 թիգական հաշիւներու մտնել, և այնչափ հան-
 քային և բուսեղէն նիւթոց փորձերու և բա-
 ղադրութիւններու դժուարութեանց ձեռնար-
 կել, մարդ մը ասի չի կրնար ընել առանց յի-
 մար կամ ցնորեալ ըլլալու, ուրեմն կայ ար-
 հեստ և գաղտնիք մը զոր մարդիկ դեռ չեն
 հասած այն կատարելութեանց :

ԵՐԿՐՈՐԳ ԿԵՐՊ

Հետեւեալ բուսեղէններէն ժողվելով՝ բա-
 ղադրէ այսպէս,

- Մէրէր 2—տրամ,
- Օղււ օրէ 2— „
- Կիւ հալէ 2— „
- Եսուֆ 2— „
- Փոփուր 2— „

10

Այս բուսեղէնները 75 տրամ պարզ ջրոյ
 մէջ եփելով և եռացընելով 20 տրամ մնալու
 է, 36 ժամ անոթին մէջ մնալէն վերջը բա-

րակ շղարչէ մը քամելով ծաղիկները նետելու
 և քամուած հիւթը առնելով 5 տրամ բարակ
 ծեծուած պաղլեղով բաղադրելու է, և վրան
 կէս տրամ սնդիկ լեցնելով 12 ժամ զով տեղ
 մը դնելու և վրան ծածկելու է, 12 ժամէն
 վերջը բերանը բանալով հինգ հատ թարմ
 հաւկթի դեղնուցը վրան լեցնելով քառորդ
 ժամ շարունակ խառնելու է, յետոյ փայտէ
 մեծ տուփի մը մէջ աւազ լեցնելով և այն դե-
 ղը սեւ սրուակի մէջ լեցուր և բերանը խցելով
 պատրաստեալ աւազին մէջ թաղէ և վրան եր-
 կու մատնաչափ կպրածիւթ լեցուր, և անխոնաւ
 տեղ մը դիր 72 ժամ, անկէց վերջը գգուշութեամբ
 կպրածիւթը բանալով աւազին մէջէն սրուակը
 հանէ և բերանը բանալով 2 տրամ հաւու արևն
 լեցուր մէջը և սրուակը աղէկ մը խցելով տաք
 սննեկի մը անկիւնէն կախէ 24 ժամ, յետոյ վար
 առնելով փոքրիկ անաղաւոր պղինձի մը մէջ լե-
 ցուր և վրան 5 տրամ շրէզ լեցնելով չափաւոր
 կրակի մը վրայ եռացուր, մինչեւ որ մեղրի
 նման թանձրանայ, յետոյ կրակին վրայէն
 վար առ և պաղեցուր, վրան ծածկէ, կենդա-
 նի գոյտ մը առնելով մորթոտէ և մաքրէ, յե-
 տոյ այն մորդը կուզի մը տաք արեանը մէջ
 պահէ երեք օր և երեք գիշեր, յետոյ հանէ

և հովին դէմ կախէ, աղէկ մը չորնալէն վեր-
 շը վար առ և այն թանձրաթան եղած դեղէն
 մէկ կաղնոյ հատի չափ վրան քսէ, և սպիտակ
 մաքուր թիթեղեայ տուփի մը մէջ դնելով քը-
 սան և մէկ օր ծոմ պահելէդ վերջը դբպանդ
 գիւր, բայց կեցիր, մի' արտորար, այս գործու-
 ղութեան ներքեւ սա տառերը կան նշանակուած
 Ձ . . . Գ . . . Օ . . . Դ . . . Ս . . . Տ . . .
 Մ . . . Օ . . . Մ . . . :

Եթէ այս տառերը լուծես՝ նպատակիդ
 կրնաս հասնիլ, թէ ի՞նչ կերպով լուծելու է,
 առոր հրահանգը փորձերու արդիւնքը պիտի
 ցուցնեն քեզի, կրնա՞ս չվհատիլ, կրնա՞ս համ-
 բերել, կրնա՞ս միամիտ ըլլալ, կրնա՞ս մէկ քանի
 գիշեր քնհատ մնալ, ահա այն ժամանակ քը-
 նութիւնը իր սքանչելիքներէն մաս մը կը շը-
 նորհէ քեզի, և անով քու բոլոր կեանքդ քիչ
 կամ շատ երջանիկ կըլլայ, գուցէ թշուառ ըլ-
 լայ քու անբաւականասիրութեամբդ, հիմա կը
 մնայ այդ տառերը լուծելուն կերպը ցոյց տալ
 միայն սկունքը յայտնել այս տեղ, և փորձա-
 աւական գործողութեան դաս մը աւանդել այս-
 պէս :

Վերոգրեալ տառերը գորտի մաքուր մոր-
 թի վրայ եղան թարմ արիւնովը դրէ, և տա-

աւերուն ճեւին համեմատ մորթը զատ զատ կտրատէ, որ պիտի ըլլայ ինը տառեր ինը մորթերու վրայ, անոնք որ եզան արիւնով գրուած են, աղէկ մը չորնալէն վերջը մէկ մխալ սընդիկի մէջ երեք մխալ բարակ և մաքուր կիր խառնէ և աղէկ մը միացուր, վերջը այն ինը մորթատառերը այս գեղին մէջ զետեղելով վրան կաթիլ առ կաթիլ ջուր լեցուր մինչեւ 25 կաթիլ, անանկ որ ամեն մէկ կաթիլը մէկ մէկ վայրկեան վերջը լեցուի, այս գործողութիւնէն վերջը սպիտակ ու փոքրիկ շիշի մը մէջ դիր և մեղրամոմով վրան ծեփէ, թող մնայ մինչեւ 30 ժամ, այնուհետեւ հանէ և բիւրեղեայ տափակ ամանի մը մէջ 300 արամ կովի անարատ կաթ լեցունելով շիշին մէջի եղած դեղը կաթին հետ խառնելով՝ երկու ժամ շարունակ փղոսկրեայ գործիքով խառնելու է, մինչև որ կապոյտ գոյն մը ստանայ, այն ժամանակ 25 արամ բարակ ծծումբ լեցնելով վրան ծածկէ, 48 ժամ թող մնայ, այնուհետեւ բիւրեղեայ ամանին բերանը բաց և լեցուր մէջը նոր մորթոտած կուզի արիւն 10 արամ, աղէկ մը խառնէ՝ և պիտի տեսնաս որ այդ բազազրո թիւնները ու գործողութիւնները քեզի քնչ սովրեցուցին, այս գործողութեան մնաց-

եալ երրորդ մասը դու ինքնիրենդ կրնաս հասկանալ եթէ աշխատիս :

ԵՐՐՈՐԳ ԿԵՐՊ

Ոչխարներուն վրայ դանուած և կէն ըսուած միջատներէն այնչափ ժողովէ որ՝ անսնցմէ տասը արամի չափ՝ արիւն գոյանայ, այս արեանը մէջ փղին աղին գտիր և խառնէ, անանկ որ շատ չը թանձրանայ, յետոյ սեւ և փոքրիկ շիշի մը մէջ լեցուր և բերանը չը խցելով այս կախէ 36 ժամ, յետոյ վար առնելով արջի տաք արիւնը մէկու կէս մխալ վրան լեցուր և կէս ժամու չափ խառնէ և բերանը աղէկ մը խցելով՝ ձիու տաք աղբի մէջ պահէ մինչեւ 48 ժամ, այնուհետեւ հանելով՝ կաշաղակի փայծեղը գտիր և անոր մորթը զգուշութեամբ հանէ որ չի պատուի, այդ մորթը կծու քացախին մէջ պահէ երեք օր և երեք գիշեր, այնուհետեւ հանելով աղէկ չորցուր հովին դէմը և պատրաստեալ դեղը առնելով մորթին մէկ կողմը միայն քսէ չափաւոր և այս կախէ 24 ժամ, այդ գեղաւոր մորթը փոքրիկ և եռանկիւնի արծաթեայ տուփի մը մէջ դիր եւ հետեւեալ տառերը բացատրելդ վերջը փրդ կախէ, Ե . . . Ե . . . Տ . . . 1

Ս . . . Ի . . . Ե . . . Ը . . . Թ . . . Պ . . . Ե . . . :

Ս.յս առուերուն լուծումն ալ ասկէ յառաջ ցոյց տրուած փորձերով պիտի ըլլայ, այս ամեն գործողութեանց մէջ երեք տեսակ դժուարութիւններ կան, առաջինը՝ քսան եւ մէկ օր ծով պահել, երկրորդ՝ չափերը աղէկ որոշել, երրորդ. ժամանակներու մէջ չընթիւթուել, եթէ ասոնք կանոնաւորապէս 'ի գործ գրուին յաշտութեան մասին կասկած մի՛ ունենար, եթէ ասոնց մէջ պզտիկ թերութիւն մը ըլլայ՝ աշխատութիւնդ ընդունայն է, ընթերցողը կարելի է ըսէ թէ՛ — Յառաջաբանիդ մէջ ըսած էիր թէ՛ ժամանակիս ճախորդութեան պատճառաւ՝ կատարելագործելու պէտքը ես չը կրցայ լըրացնել եւ այլն եւ այլն — հիմա ի՞նչ զարմանալի բանէ որ՝ իբրեւ կատարելագործեալ գործ կը պատմես ինձի, արդարեւ ես ինքս մանրամասնաբար փորձերու չեմ՝ մըտած, այլ այն օրիորդին երկար ժամանակեայ աշխատութեան մէկ փորձին արդիւնքն է պատմածս, որուն ճշմարտութեանը վրայ կասկածելու բնաւ տեղիք չունիմ, բայց թէ այս օրիորդին հետ ի՞նչպէս յարաբերութիւն ունեցայ՝ ասոր պատճառը զիչ մը վերջը պիտի պատմեմ:

Օրիորդը գիրքին գլխաւոր տեղերը օրինակել եւ փորձերը ընելէն վերջը՝ հարուստ աիկիւնին կողմանէ մէկը գալով մայրը եւ օրիորդը առն հրահուց, եւ ելան գացին, տիկինը տասն եւ հինգ օր ասոնք վար դնելով օրիորդը համազօց որ ամուսնանայ մօրը կենդանութեան ժամանակ, բայց այն միշտ չեմ ուզեր եւ չեմ կրնարը կը պնդէր, վերջապէս աիկիւնը եւ անոր բարի այրը աղջիկը համազօցին եւ բարի երիտասարդ մը դտնելով անոր հետ ամուսնացուցին: Տիկինը իր խօստմանը համեմատ հարիւր քառասուն եւ ուրիշ պէտք եղածները տուաւ օրիորդին, մայրը օրիորդին հետ դնաց նոր փետին առնը, որովհետեւ Տիկինը այսպէս պայման ըրեր՝ էր երիտասարդին հետ, օրիորդը շատ սէր կապեց իր ամուսնոյն հետ եւ ընդ օրինակած գիրքին գաղտնիքը կամաց կամաց յայտնեց անոր, երիտասարդ ամուսինը ամենեւին չէր հաւատար եւ Արարելէն լեզուին ալ բաւական հմուտ թիւն ունէր, երիտասարդին արհեստը դեղագործ ըլլալով՝ կուղէր մէկ քանի փորձեր ընել, այդ գրքին մէկ կողմը զարմանալի գիւտ մը կար գրուած այսպէս Ս . . . Ա . . . Տ . . . Կ . . . Ե . . . Խ . . . Զ . . . Դ . . . Ը . . . Ե . . . Տ . . .

Ա . . . Մ . . . Շ . . . Խ . . . Թ . . . Յ . . .
 Օ . . . Ա . . . Մ . . . Ս . . . Լ . . . Ք . . .
 Ժ . . . Թ . . . Մ . . . (1)

Այս գործողութիւնը երբ յաջողեցաւ՝ երկտասարդը ալաւելի սկսաւ հետեւել, բայց խեղճին վրայ հիւանդութիւն մը գալով՝ քիչ մը ժամանակ դադրեցուց, այս դադարման ժամանակ երիտասարդ բարեկամիս տունը գոյի տեսութեան համար, այն տեղ երբոր առանձին մնացինք գիրքին մէջ գրուածներէն մէկ քանին ինձի հարցը ելով իր ըրած մէկ փորձը պատմեց ինձի այն ատեն զիրքը ուղեցի տեսնել, նոր հարցը առաւ բերաւ, այն միջոցին երիտասարդը յանկողնին մէջէն այլայլած նոր հարսին երեսը նաւեցաւ, ես կարծեցի թէ՛ երիտասարդ բարեկամս զիրքը չէր ուղեր ինձի ցուցնել, այս պատճառաւ հարցուցի թէ՛ — արդեօք չէիք ուղեր որ զիրքը ես տեսնեմ — :

— Այ, պատասխանեց հիւանդ բարեկամս,

— Արեմն ի՞նչ պատճառաւ այլոյնցաւ դէմքերնիդ :

(1) Տպագրական աղտութիւնը չը ներկուեն համար՝ գործողութիւնը ամբողջ եւ յայտնի չը դրնիք :

— Արովհետեւ մաղաղամի վրայ գրուած այս մեծութեամբ գիրքը չէր իմ տեսածս :

Այն ժամանակ օրիորդը կարմրելով մը ըսաւ թէ՛ իմ օրինակածս ամբողջ չըլլալուն համար եւ թէ՛ գիրքը անմաքուր ըլլալուն՝ չուղեցի անիկայ բերել — :

Արովհետեւ օրիորդը ամուսնացած ժամանակը ծերուկին գիրքն ալ սնտուկը դնելով հետը բերած էր, բայց ի՞նչպէս էր եղեր որ իր ամուսնոյն չէր ցոյց տուեր՝ ասոր պատճառը նոր հարցը յայտնեց թէ՛ — այդ գիրքը ըստմերը չըլլալուն եւ աւանդ պահած ըլլալուս համար ցուցնելու չը համարձակեցայ — :

— Չհամարձակելու ի՞նչ կայ, պատասխանեց ամուսինը :

— Արովհետեւ ծերունին կարելի է յանկարծ օր մը գայ եւ պահանջէ ինձմէ, ասոր վրայ հարցը սենեակին դուռնէն դուրս ելաւ, եւ բարեկամս այդ գրքի մասին մէկ քանի խորհուրդներ հարցրելով զարմանք կը յայտնէր, յիշաւի գրուածները խելքէ դուրս բաներ էին, բայց օրիորդը իր ճարպիկութեամբը մէկ քանի բաներ ըրած եւ յաջողուած ըլլալը՝ իր ամուսինը զմայելելով կը պատմեր, եւ բարեկամս ասոր մէկ փորձը ըրած եւ յաջողուած ըլլալն

ալ յայտնելով՝ եւ հետզհետէ ալ փորձեր ընեալու յօժարութիւնը յայտնելով իրարմէ բաժնուեցանք կրկին անգամ տեսութիւն ընելու պայմանաւ :

Վերջապէս բարեկամս քսան եւ հինգ օր պառկելէն վերջը առողջացաւ . եւ ինքզինքը բոլորովին այդ գրուածներուն տալու ետեւէ եղաւ : Ստոնք այդ եւ կին այն աստիճան աշխատեցան որ՝ չէ կարելի բացատրել, օր մը երբոր աներեւոյթ ըլլալու երբորդ փորձերով կը պարապէին, երիտասարդին ազդականներէն Մ. աղան եկաւ, այս անձը բնիկ Ակնցի էր, բայց եւեւսուն տարիներէ ՚ի վեր Ռօտտսթօ կը բնակէր, ինքը վաթսուն եւ ութը տարուան պատկառելի ծերունի մ' էր, բարձրահասակ, առողջ, սպիտակամորթ եւ ուժեղ, երիտասարդին ամուսնութիւնը լսելով շնորհաւորելու եկեր էր՝ պէտք եղած ընծաները հետը բերելով երբոր ասոնց խել մը դեղերով եւ գործիքներով աշխատութիւնը տեսաւ, հարցուց թէ ինչ կը շինեն, երիտասարդը պատասխանեց թէ՝ — խանութիս վերաբերեալդեղեր կը պատրաստեմ — : Մ. Աղան պատասխան տուաւ թէ՝ — ժամանակով աշխատած եւ քրտինք թափած գործերս էին ասոնք, միթէ դուք չէ՞ք դիտեր

թէ ո՞րչափ աշխատեր եւ ո՞րչափ ստակ վառներ եմ, դուք աղէկ գիտէք որ ստակի ալ կարտութիւն չունէի եւ չունիմ, բայց եւ այնպէս ես այս արհեստին տակը եւ ծայրը չեմ կրցեր դրտեր, դուք դեռ նոր սկսեր էք, բայց զիտցած եղիք ես ձեզի բարեկամաբար կը զրուցեմ որ՝ եթէ 40—50 հազար լիրաներ ունիք՝ գործի սկսեցէք, փորձեր ըրէք, ստակ վառներէք, կարելի է 5—10 հազար լիրա մսխելով քիչ մը բան կրնաք հասկընալ, ապա թէ ոչ, այս գործին վախճանը աղքատութիւն, թշուառութիւն եւ մինչեւ անգամ անձնասպանութիւն կը ծնանի, ես այդ գրքերէն երեսուն հատոր մագաղաթի վրայ եւ նօտը դրով գրուած պատկերազարդները ունիմ, Ակնայ մէջ ունեցած այգիներս, արտերս, ագարակներս եւ բոլոր կալուածներս այդ գործին համար ծախեցի, բայց բարեբաղդաբար ստացուած քիս կէս մասը միայն այս արհեստին մսխեցի եւ հազիւ թէ մէկ քանի գաղտնիքներու տեղեկացայ, քու հայրդ աղէկ գիտեր որ հանգուցեալ ձ. Մ. աղային ամեն գլխուն գալիքները ես դուշակեցի եւ ըստ այնմ հրահանգ տուած էի, անանկալ իմ կ' որդւոյս գլխուն պատահելիքները մէկ տարի առաջ իրեն յիշեցուցի, բայց այն Յ. Մ. ընկերու-

Թեան ապաւինելով ըսածներուս ականջ չի դը-
րաւ, եթէ ես չըլլայի՝ մինչեւ հիմա մեռած
դացած էր, թէեւ խելքը զուխը եկաւ վերջը
և ըսածներուս ամենն ալ յիշեցի բայց ինչ օ-
գուտ որ իր ձեռքի մեծ վաճառականութիւնը
կորսնցուց, որն որ հարիւր հազար իրայի հետ
կը խաղար, իր ինքնահաւանութիւնը իր տունը
քանդեց, թողումք հիմա անցեալ դէպքերը,
միայն սա խորհուրդը կուտամ ձեզի, որ այդ
տեսակ դործերը ձգէք և ձեր ամենօրեայ գոր-
ծերովը պարապիք, ուրիշ բան է՝ եթէ մեծ ըն-
կերութիւն մը կազմուի և այն ընկերութեան
ծախքովը այս դործերուն հետեւիք :

Երիտասարդը բոլոր այս խօսքերը լսելէն
վերջը՝ իր ըրած մէկ քանի փորձերուն արդիւն-
քը յայտնեց, Մ. աղան զարմացաւ մնաց, ը-
սելով թէ՝ — Իմ գիրքերուս մէջ ատոնց բա-
ղադրութեան մասին տարբեր կերպով գրուած
է, այսու ամենայնիւ դարձեալ վաղը մէկ մը
աչքէ անցունեմ — :

Երիտասարդը հարցուց թէ՝ — ո՛ւր է
գիրքերդ — :

Մ. աղան սլատախանեց, — Մերը Երևան-
ի հիւն փողոցը պանդոկ մը կայ, անոր մէջ
սենեակ մը ունիմ վարձած, այն տեղ պա-
հած եմ — :

Երիտասարդը շատ աղաչեց ըսելով՝ որ վա-
ղը երեկոյեան այդ գիրքերէն մէկ քանին հե-
տըք բեր տեսնեմ :

Մ. աղան, — Այս տեղ չեմ կրնար բերել
թէ որ կուգես վաղը հետս կուգաս՝ ցոյց կու-
տամ քեզի — :

Երիտասարդը հաճութիւն տալով հետեւ-
եալ առաւօտուն Մ. աղային հետ ելաւ Բա-
նի փողոցի պանդոկը դնաց, և վերի յարկը
սենեակ մը բանալով ներս մտան, երիտասար-
դը երբոր մազաղաթի վրայ դրուած երեսուն
հատոր գիրքերը տեսաւ՝ ապշեցաւ մնաց, և
այնպէս գեղեցիկ նօսր տառերով գրուած և
սքանչելի պատկերներ նկարուած էր որ՝ տես-
նողին ուշքը կը զրաւէր այդ գիրքերը՝ ինչ-
պէս որ թուականէն յայտնի կը տեսնուէր Քրիս-
տոսի 1392 թուականին գրուած էր, գրողին
անուան սկզբնատառերը կար այսպէս Չ. Վ. Ք.
այս տառերէն վերջը ՇԱՄԻՐԱՄԱԿԵՐՏ գրը-
ուած էր մեծ տառերով, Երիտասարդը Մ.
աղայէն խնդրեց որ այդ գիրքերուն մէկ երկու
հատորը իրեն թողու, բայց նա չի համաձայ-
նեցաւ, վերջապէս երիտասարդը տխրելով իր
տունը դարձաւ, Մ. աղան ալ Ռօտոսթօ ու-
ղեւորեցաւ :

Մ. աղային խօսքերը երիտասարդին ազդեցութիւն չընելով՝ զրուածոց փորձերը ընելու ետեւէ եղաւ, և հետզհետէ նոր գիւտեր հնարեց, այդ գիւտերը ընելով՝ մանրամասնաբար կը գրեր, որպէս զի օր մը հրատարակութեամբ 'ի լոյս ընծայուի՝ սակայն դժբաղդաբար երիտասարդը կրկին անգամ հիւանդանալով՝ քառասուն օր չը տեւեց մեռաւ, ալ անկարելի է նկարագրել իր նորատի ամուսնոյն վիշտն ու հեծութիւնը, սուգն ու արտմութիւնն նը, թողունք նոր հարսին որ իր մխիթարութիւնը գտնէ իր մօրը և իր թշուառ երկանը ազգականներուն միջնորդութեամբ և բարի յորդորանօք :

Գառնամբ մեր ծերունի Յակօբ եղբօր որ՝ մէկ տարւոյ չափ չը տեսնուէին վերջը յանկարծ օր մը դուռը կը դարնէ կուգայ, բայց տակաւին չէր գիտեր օրիորդին ամուսնանալը և անոր էրկանը վաղահաս մահը. մարդը փոխանակ նոր հարսը շնորհաւորելու՝ անիկայ մը խիթարելու եկաւ, անանկ գեղեցիկ խօսքեր կընէր որ՝ հազիւ թէ ուսումնական կղեր մը կարողանայ խօսելու, ծերը բնական հանճար մը ունէր, կարծես թէ՝ առաջուց շարագրութեամբ մը մը կամ դամբանական մ'էր խօսածներ.

ըր՝ լսողները զմայելով կը յափշտակուէին, մէկ քանի օր այնտեղ մնալէն՝ վերջը սգաւոր հարսին մայրը մէկ կողմ կանչելով՝ գիրքը խընդրեց անկէ՝ և առաւ զնաց իր նոր ստացած մէկ բարեկամին տունը, այդ տանը մէջ քառասուն երկու տարեկան կնիկ մը կար, որուն ալ ձեռքը և ոտքը չէր կրնար շարժեր կաթուածէն, հրդեհէ մը վախցած ըլլալով երկու տարիէն աւելի էր որ յանկողին կը ծառայէր, ծերունին գիշերները անոր վրայ կը կարդար, վերջապէս քառասուն գիշեր կարգալէն վերջը՝ կնիկը սկսաւ կամաց կամաց ձեռքն ու ոտքը շարժել, հարկ չըկայ ըսելու թէ՝ այդ կնկանը այլը բժիշկներու և դեղերու շատ ստակ վատնած էր. բայց ծերունւոյն կարգալովը չորս ամիս չը տեւեց ուրի վրայ ելաւ, կնկանը բոլոր բարեկամներն ու ազգականները կը զարմանային այդ կնկանը առողջանալուն, որովհետեւ բժիշկները անկարելի է ըսած էին առողջանալը. այդ կնկան մօտաւոր բարեկամներէն մէկը շատ հետաքրքիր եղաւ այդ ծերունւոյն, և կառներ իր տունը կը տանէր անկէ բան հասկընալու և կամ սովորու համար, այդ մարդը օր մը իր տանը մէջ ծանրագին օղ մը կը կորսնցունէ և կուգայ ծերունւոյն կը յայտնէ դործը, ծերո

նին այն գիշերը տուն դալով զանազան վարպետութիւններ ընելէն վերջը՝ իմաց կուտայ որ ալ կողմի տանը սպասաւորը գողցած է՝ այն ժամանակ, երբոր այն ինչ օրը այս տունը եկան այն ընտանիքը ձեր առողջութիւնը շնորհաւորելու, տանուտէրը ծերունւոյն կը հարցընէ թէ՛ — այդ սպասաւորը ի՞նչ տեսակ և ի՞նչ գոյն մարդ է — :

Ծերունին պատմեց այն սպասաւորին դէմքը, գոյնը, հասակը եւ այլն եւ այլն :

Տանուտէրը զարմանալով հարցուց թէ — այդ օրը ի՞նչպէս կրնամք այդ սպասաւորէն պահանջել :

Մերը. — Ատի շատ դիւրին է, միայն բան մը պէտք է ընել, անոր կերած ամանին մէջ սա ջուրէն չորս հինգ կաթիլ լեցնել, եթէ այս կարողանաք ընելու՝ այն իր ձեռօքը կը բերէ և առած տեղը կը դնէ. եթէ այս բանը դժուար կըլլայ ձեզի ընելու, այն ժամանակ ուրիշ միջոց կը դործածեմք — :

Տանուտէրը, — Յակոբ եղբայր, այդ ըսածդ մեզի համար դժուար բան է, ուրիշ միջոց կայնէ այն դործածէ — :

— Արեմն մէկ քանի օր համբերեցէք, ես կուգամ այդ գործը կը տեսնամ, դուք մի՛

վախնաք, դեռ պահած է այդ օրը — :

Տանուտէրը շնորհակալ ըլլալով խնդրեց որ շուտով գայ և իր խոստումը կատարէ :

Չորս օր վերջը ծերունին եկաւ, և հետը մէկ սրուակ կաթ բերաւ. այդ կաթը պղինձէ մաքուր ամանի մը մէջ լեցունելէն վերջը՝ մէկ քանի տեսակ դեղեր խառնեց անոր հետ, այնուհետեւ տանը պարտէղը իջնելով քովի դըրացիինն պարտեղին վրայ սրակեց, (որուն տանը սպասաւորը գողցած էր), յետոյ եկաւ ըսաւ տանուտէրին թէ՛ — այս գիշեր իր ձեռօքը կը բերէ օրը և իր տեղը կը դնէ, դուք անհոգ եղիք :

Արդարեւ հետեւեալ առաւօտուն տեսան որ օրը անտուկին վրայ դրուած կը կենար, լըսող և տեսնող բարեկամները չէին ուզեր հաւատալ, որուն մէջ ես ալ կայի, չեմ գիտեր թէ՛ գարուս լուսաւորեալ և խաստուն անձինքը ծերունւոյն բրածնբրուն ի՞նչ պատճառ սլիտի տան, յայտնի է որ պիտի չը հաւատան, սակայն չտեսնալով և չը հաւատալով բան մը սուտ և անհիմն եղած չկրնար ըլլար, Ամերիկայի երկիրը չը տեսնելովս՝ չիկայ չեմ կրնար ըսել. քանի որ դեռ տեսածներնուս վրայ կատարեալ դաղափար չունիմ, բնութեան անբաւ ու ան-

Թիւ դազանեաց մէջ կը թափառիմք բայց մենք չեմք դիտեր, նման այն կուրաց՝ որք գեղեցիկ պարտէզներու մէջ մտնելով ծառոց ու ծաղկանց հրաշալի գեղեցկութիւնը չեն կրնար տեսնել. միայն հոտուըտալով կը շատանան, ասկէ յիսուն տարի յառաջ եթէ ըսուեր թէ՛ Փարիս դէն մէկ ժամուան մէջ պատասխան պիտի կրնայ առնուիլ և տրուիլ, — ասոր օ՛վ կրնար հաւատար, կամ թէ հարիւր տարի առաջ ըսուեր թէ՛ — մէկ ամսուան մէջ կարելի է Սմերիկայ երթալ —, հարկաւ մարդ պիտի չը հաւատար, քանի որ աչքով տեսած չէին, բայց այն սքանչելի դիւտերը այսօր կատարելագործուելով մարդկային ազգը վայելչու բաղդին արժանացած է, ուրեմն սպասենք թէ արդեօք ժամանակին դեռ ինչէ՞ր, պիտի տեսնէ և վայելէ, բայց կայ մէկ ճշմարտութիւն մը որ՝ առանց ապացուցանելու չեմք կրնար լռութեամբ անցնիլ, այն է Եւրոպացւոց անձանձիր և անդու աշխատութիւնները. որոնց վերայ աւելի կը փայլի բանականութեան և իմաստասիրութեան սքանչելի ոգին՝ քան թէ Ստիպուոցս վերայ. որովհետեւ ամեն դիւտ և հնարք անոնք գտան և մինչեւ ցայսօր ալ անոնցմէ յառաջ գալու վրայ են: Ինչո՞ւ անոնց աշխատութեանց և ուս-

մանց չեմք հետեւիր, ինչո՞ւ անոնց մեթոտներով չեմք շարժիր կամ չեմք ուզեր շարժիլ, փոխանակ անոնց պարերուն, զգեստներուն և ուրիշ ունայնութեանց հետեւելու՝ անոնց հնարագիտութեանց, արհեստից և ուսմանց որ հետեւիմք աւելի շահաւոր և օգտակար չըլլար մեզի համար, բայց մենք անոնց միասակար և անօգուտ գործողութիւնները ընդունելով՝ օգտակար ու շահաւէտները ունայն համարած եմք:

Օրինակի համար, դիտեմք և կրգգամք որ ընկերութիւնները աղգային յառաջադիմութեանց նպատակով մէկ տարրն է, ի սկզբան մեծ եռանդեամբ և աշխուժով կ'սկըսիմք, մէկ քանի ամիս շարունակելէս վերջը՝ կը թուլանամք, ջանքերնիս ու եռանդնիս կը սառի, և մեր ձեռքով կազմածը մենք կը քանդենք և մենք բնաջինջ կընենք, ի՞նչ է ասոր պատճառը, պատճառը ուրիշ բան չէ, եթէ ո՛չ կատարեալ գատտիարակութիւն և հիմնաւոր ուսումն չունենայնիս է, եթէ մէկ քանի նշանաւոր Ռոտմանկաներ և Դոստիարիւտեր ունիմք, անոնք ալ օտար աղգաց պարտէզներէն իրենց ծաղիկները քաղած և իրենց փունջերը պատրաստած ըլլալնուն համար՝ մեր Ս. զգին համար

այնչափ օգտակար չեն և չեն կրնար ըլլալ:

Պատուելի ընթերցող, կուզե՞ս յառաջ երթալ, ընկերութիւններ կազմէ, գործարաններ հաստատէ՛. Աստանդնուպօլսոյ մէջ նախ Համալսարան մը հաստատէ՛, դաւառացւոց համար դիշերօթիկ դպրոցներ հիմնէ՛, երկրագործութիւնը առաջ տա՛ր, գործելէ և աշխատելէ մի՛ վհատիր, քու անձնական շահուդ պէս մտածէ՛ ազգիդ շահն ու օգուտը, կիրակի օրերը որճաբաներու և դրօսարաններու մէջ խաղամուլութեամբ և դիմեմուլութեամբ ժամանակ անցունելու՝ ընթերցասիրութեան և ազգային օգտակար գործոցը հետեւէ՛, առ ազգն ունեցած պարտականութիւնդ ճանչցիր, Ազգիդ պատուոյն նախանձախնդիր եղի՛ր, ուսումն ու յուսաբերութիւնը յարդէ՛, ինչպէս դու բարոյական մարդ մը ստեղծուեցար՝ քու վարքը ու բարքդ ալ բարոյալից թող ըլլան. շուայութենէ ու զեղխութենէ հեռու կեցիր, ընտանիքիդ վրայ հոգ ու խնամք ունեցիր, սիրտդ ու խիճզդ մաքուր բռնէ՛, քեզնէ հարուստներուն հետեւելու և նմանելու տղայութիւնը թող և թէ՛ հետեւիլ ու նմանիլ կուզես՝ աւելի ուսումնականաց և հանճարեղ մարդկանց հետեւէ՛, որովհետեւ մեր ազգին թշուառութեան

մէկ պատճառն ալ շուայութիւնն է. որով շատ ընտանիքներու անբարոյականութեան և աղքատութեանը տեղի տալով՝ բաժանմունք և աւերմունք յառաջ կը բերեն, ուստի կեդրոնական վարչութիւնը փոխանակ Ազգային ներքին բարեկարգութեանց դարդելու՝ ընտանեկան խառնութիւնները դադրեցնելու և երկպառակութիւնները համաձայնեցնելու և հաշտեցնելու խնդիրներով զբաղած է:

Այդ տեսակ ընտանեկան անհամաձայնութեանց, խռովութեանց և բաժանմանց պատճառներուն վրայ առանձին տեարակաւ պիտի խօսիմ եւ կարելի եղածին չափ դարմաններն ալ պիտի ցոյց տամ:

Որովհետեւ Ազգերնու ընտանեկան վիճակը խիստ խանդարուած ու ապականուած է, եւ հետդհետեւ ալ պիտի վաթարանայ, նախ ընտանեկան եղծումները բաճնալու եւ բարեկարգութեան ճանապարհներ պատրաստելու եւ ցոյց տալու է ժողովուրդեան, եւ յետոյ յառաջադիմութիւն սպասելու է. քանզի առանց ընտանեկան բարեկարգութեան եւ անդորրութեան, Ազգերնիս յառաջադիմութեան երես տեսնելիք չունի, եւ թէ չափազանցութիւն չըլլար, եւ եթէ կը ներկն մեր ընթերցողները

կը համարձակիմ ըսելու թէ՛ Ազգերնուս եւ մանաւանդ էջ . Պօլսեցւոցս ընտանեկան անբարոյականութիւնը վերջին ծայրը հասած է , և գրեթէ տեսակ մը քայկեզ դարձեր է , ուրուն բուժիլը չսեմք անհնարին՝ գէթ դժուարին պիտի ըլլայ այս ընթացքով :

Ազնիւ ընթերցող, չըլլայ թէ ինձի մեղադրես ըսելով թէ՛ — անբարոյն ըլլալու ինքեան շեղուցիք — Աւերայն ընդանկան փոփոխ մտերուն մէջ մը — :

Ո՛հ , ի՞նչ ընեմ , հոգւով և սրտով կը սիրեմ Ազգս , կը ցաւիմ անոր վրայ , մտածելով որ ես մահականացու եմ , բայց Ազգիս անմահութեանը երջանկութեանը և բարօրութեանը պէտք է ցանկամ , պէտքէ ջանամ և հոգամ իմ անձէս և իմ կեանքէս աւելի . բայց կարելի է դու այդ դպացումը չունիս և Ազգային սէրը քեզ համար նշանակութիւն մը չունենայ , սակայն աղէկ դիտնաս որ Ազգիդ փառքն ու պայծառութիւնը . լոյսն ու իմաստութիւնը քուկդ է և քեզ կը վերաբերի , այնպէս ալ Ազգին թշուառութիւնը , յետադիմութիւնը , անչքութիւնը , անբարոյականութիւնը և սողիառութիւնը քուկդ է և քեզ կը վերաբերի , վասն զի ազգին մէկ անդամը և մէկ

անհատը կը կազմես :

Արդ՝ Տերտակիս 23 ըդ . երեսին մէջ թուաբանական հաշիւ մը դրած էինք , որով մարդոց ծնած թուականը ամիսը և օրը կը ցուցնէր , ատոր գործողութիւնը քանակադիտութեան (մաթեմատիկ) մէկ ճիւղէն կերնէ , և Տաճկական հեղճէն ըսուած գործողութիւնով կըլլայ , ես չեմ կրնար ըսել թէ այդ ինդիքը լուծող չիկայ , միայն սա կըսեմ որ այդ գործողութեան ով որ տեղեկութիւն ունի՝ լրագրաց միջոցաւ հրատարակելը կը խնդրեմ , վասն զի երեք կերպով կըլլայ այն , եւ իւրաքանչիւր գործողութիւնը մէկզմէկէ տարբերութիւններ ունի . գուցէ մէկ ուրիշը այդ ինդիքոյ մասին այլ գործողութիւն մը դիտցած ըլլայ , ուստի շատ չընորհակալ պիտի ըլլամք եթէ հրատարակուի :

Որովհետեւ անցեալները Ազգերնուս համբաւաւոր թուադէտներէն մէկը դրամափոխներէն մէկուն հետ առեւտուր ըրած ժամանակը կը ըտեսնէ որ դրամափոխը կարճ կերպով հաշիւ մը կնէ եւ ցոյց կուտայ մեր թուաբանին , բայց մեր պատուելի թուաբանին խելքը չի հասնիր այդ հաշիւին , այսու ամենայնիւ իր չը հասկանալը չը յայտնէր դրամափոխին , գործը վերջացունելէն յետոյ տուն կուգայ եւ

զրիչը ձեռք առնելով գրամատիոսին ըրած կարճ
 գործողութեան ետեւէն կիյնայ, կաշխատի,
 կը քրանի բայց չի կրնար գտնալ միւս օրը իր
 ծանօթ թուարանին կը յայտնէ գործը, եր-
 կուրը զլուս գլխու կուտան եւ մէկ քանի ժամ
 կաշխատին եւ դարձեալ չեն կրնար գտնել,
 վերջապէս կոյանք կուտան, որ թուագիտու-
 թեան գործողութիւնները անսահման ճիւղեր
 ունի իր մէջ եւ յետին մարդ մը առաջին թուա-
 դէտին չի զիտցած կանոնները կրնայ դիտնալ:

Օրինակի համար, հին ժամանակները վար-
 ժարաններնուս մէջ ըզգումապատկութեան փոր-
 ճը հետեւեալ կերպով կըլլար:


760	/	4	+ 23
28	/	4	
6080			
1520			
21280			


Բազմապատկութեան այս տեսակ փորճը
 շատ թուագէտներ չեն դիտեր թէ Ս. Լճէպրայի
 ո՞ր կանոնէն ելած է, եւ թէ ինչու այս փորճը
 երբեմն չյարմարիր եւ այլն. ահա այսպէս շատ
 տեսակ կանոններ դիտցողներ կան մեր գրա-

մաթիոսաց եւ արհեստաւորաց մէջ՝ որք շատ ան-
 դամ հմուտ թուագէտներուն մտածեցնել կու-
 տան. եւ կրնամ ըսել թէ ծերուկին գիրքին
 մէջ աշխարհիս մէջ գտնուած ամեն տեսակ ուս-
 մանց եւ գիտութեանց ճիւղերը եւ կանոննե-
 ըը կը պարունակէր, եթէ մեր այս հրատարա-
 կութիւնը Ս. զգայիւններէն ընդունելութիւն գըտ-
 նէ՝ մաշկի հիւանդութեան վրայ ալ երկրորդ
 հատորով մը կը խօսիմք, որուն պատճառները
 մինչեւ ցարդ չէ գիտցուած:

Մ . Բ . ԻՕՁԱՆԱՆՅ

1875 Կ . Պոլիս





ՀՀ Ազգային գրադարան



NL0340410

